# ՀԱՅ
# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
# ԵՐԳԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔ

1940

A $\frac{III}{1377}$

78(47.925) 20953

Հ-24 | Հայ ժողովրդական

Երգարան:

ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 2

781.97
Հ-24
201.99-192

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

A 1377

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՅԱՌԱՋԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՆԻՒ ԵՈՐՔ
1940

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ամերիկահայ գաղութի մէջ՝ վերջին տարիներու ընթացքին նկատելի չափերով աճեցաւ Հայաստանի նոր կեանքի շէնշող եւ յուսավառ երգերը սորվելու եւ երգելու ցանկութիւնը եւ օրէ օր աւելի զգալի դարձաւ ժողովրդի լայն զանգուածներու համար պատրաստուած երգարանի մը պահանջը։ Ամերիկահայ Յառաջդիմական Միութեան Կեդրոնական Վարչութիւնը, հրապարակ դնելով այս հրատարակութիւնը, կը յուսայ գոնէ մասամբ բաւարարութիւն տալ այդ պահանջին, քաջ գիտնալով որ միաժամանակ օգնած պիտի ըլլայ Ամերիկահայութեան մէջ պահելու եւ զարգացնելու՝ սէրը դէպի Հայ ժողովրդի վերածնած հայրենիքը, Խորհրդային Հայաստանը, եւ նպաստած՝ նաեւ մեր գաղութի մշակութային զարգացման։ Կը հաւատանք որ սատարելով հայ երգի տարածման, մենք մեր համեստ բաժինը կը բերենք նաեւ Ամերիկեան մեծ ժողովրդի մշակոյթի ճոխացման։

Այս երգարանը պատրաստուած է յատկապէս ժողովուրդին համար, եւ ոչ թէ արուեստով երգիչներու, կամ երգչախումբերու համար։ Երգարանին մէջ զետեղուած են Հայ ժողովրդական եւ աշուղական ընտրեալ երգեր, ինչպէս նաեւ Խորհ- Հայաստանի կարգ մը նոր երգերը։ Այս գործով մենք յաւակնութիւնը չունինք անթերի եւ ամբողջական գործ մը կատարած ըլլալու, ուստի կը խնդրենք բոլորէն, որ իրենց նկատած թերութիւնները յանձնեն մեր ուշադրութեան՝ ապագա հրատարակութեանց առթիւ հարկ եղած սրբագրութիւնները ընելու համար։

Երգերը հաւաքելու եւ դասաւորելու մէջ կարեւոր աշխատանք կատարած են մանաւանդ Հայկ Յովսէփեանը եւ Արշաւիր Գ. Քաղցրունին. իսկ Երգարանը հրատարակելու գործին մէջ մեզի մեծապէս օգնած է Տոքթ. Գրիգորիս Գոհենյեանը՝ ձրիաբար պատրաստելով քըթերու մեծ մասը, ինչպէս նաեւ՝ Կրեֆարր Ֆորս Ինկրեյվինկ ընկերութիւնը, որոնց հրապարակաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնները։

# The Star-Spangled Banner.

**Service Version.** Prepared for the Army and Navy song and band books, and for School and Community singing, by Committee of 12.

FRANCIS SCOTT KEY. JOHN STAFFORD SMITH.




S. H. Kughakedian

1941

# ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Մշակեց՝ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ



# ԳՈՌ ՄՐՐԻԿՆԵՐ



Գոռ մրրիկները ոռնում ու շաչում են,
Սեւ մութ ուժերը մեզ ժանտ ճնշում,
Գոռ պայքարի մենք ելանք թշնամու դէմ,
Գոռ պայքարի մենք ելանք համարձակ։

Եւ կը պարզենք մենք մեր վեհ ալ դրօշը,
Դրօշը կարմիր՝ մարտընչող բանուորի,
Դրօշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ,
Դրօշը մեր վառ ու ազատ գարունքի։
Դէպ անողո՛ք մարտ,
Դէպ կատաղի՛ մարտ,
Մա՛րշ, մա՛րշ, յառա՛ջ, բանուոր դասակարգ։

Գահ ու թագին ցարերի նզովք ու զարշանք,
Շղթայով կաշկանդ մասսային յարգանք,
Մեր արիւնով շաղախուած ե՛ւ թագ ե՛ւ գահ
Պարշ ոսոխի արիւնով կողողենք —

Եւ կը պարզենք մենք մեր ալ դրօշը,
Դրօշը կարմիր՝ մարտընչող բանուորի,
Դրօշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ,
Դրօշը մեր վառ ու ազատ գարունքի։
Դէպ անողո՛ք մարտ,
Դէպ կատաղի՛ մարտ,
Մա՛րշ, մա՛րշ, յառա՛ջ, բանուոր դասակարգ։

# ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Մշակեց՝ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ



# ԳՈՌ ՄՐՐԻԿՆԵՐ



Գոռ մրրիկները ոռնում ու շաչում են,
Սև մութ ուժերը մեզ ժանտ ճընշում,
Գոռ պայքարի մենք ելանք թըշնամու դեմ,
Գոռ պայքարի մենք ելանք համարձակ:

Եւ կը պարզենք մենք մեր վեհ ալ դրոշը,
Դրոշը կարմիր՝ մարտընչող բանվորի,
Դրոշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ,
Դրոշը մեր վառ ու ազատ գարունքի:
Դեպ անողո՛ք մարտ,
Դեպ կատաղի՛ մարտ,
Մա՛րշ, մա՛րշ, յառա՛ջ, բանվոր դասակարգ:

Գահ ու թագին ցարերի նզովք ու զարշանք,
Շղթայով կաշկանդ մասսային յարգանք,
Մեր արյունով շաղախված ե՛ւ թագ ե՛ւ գահ
Գարշ ոսոխի արյունով կողողենք —

Եւ կը պարզենք մենք մեր ալ դրոշը,
Դրոշը կարմիր՝ մարտընչող բանվորի,
Դրոշը կարմիր՝ մասսայի պայքարի գոռ,
Դրոշը մեր վառ ու ազատ գարունքի:

Դեպ անողո՛ք մարտ,
Դեպ կատաղի՛ մարտ,
Մա՛րշ, մա՛րշ, յառա՛ջ, բանվոր դասակարգ:

# ՍՈՒՐԸ ԿՏՐՈՒԿ



Սուրը կտրուկ մեր Կարմիր Բանակի,
Զորեղ պաշտպանն է բանվոր, գեղջկի։
Լայն դաշտերից մինչ ծովեր հեռավոր
Բարձր է ալ, դրոշը նրա — հզոր։

Զենքն ու հրնդիկը, ըստարուկ ու ճռնչուած,
Մեզ են նայում յոյսերով խանդավառ,
Լայն դաշտերից մինչ ծովեր հեռավոր
Բարձր է ալ դրոշը նրա — հզոր։

Կուռ շարքերով ամուր,
Հաստատ, միահամուռ,
Անպարտ է մեր Բանակն անյաղթ,
Գեղջուկ, բանվոր ենք,
Հզոր ու զոր ենք
Եւ մեր դաշինքը միշտ անխախտ։

Աշխատավոր մարդկության ենք պաշտպան,
Ով պիտի դուրս գա մեր դէմ–հանդիման։
Լայն դաշտերից մինչ ծովեր հեռավոր
Բարձր է ալ դրոշը նրա — հզոր։

# ՍՈՆԱ ՋԱՆ

Խօսք՝ ԱՂԱՒՆԻ — Երաժշտ. ԴԱՆ. ՂԱԶԱՐԵԱՆԻ



Արեւն ելաւ, արտը ծաղ,
Բամբին երգեց, Սոնա ջա՛ն,
Մեր Մաշինէն արտը գնաց,
Դէ շուտ, շտապիր, եարո՛ ջան։

Ցորենի արտը ինչպէս վառ,
Շողշողում է, անուշ ջա՛ն,
Ոսկէ ծամիկ աղջկա նման
Նազն է անում, եարո ջա՛ն։

Ջրանցքը եկաւ արտը ջրեց,
Արտը աճեց, Սոնա ջան,
Հասկը ելաւ հերկը ծածկեց,
Արտն է հասել, եարո ջա՛ն։

Արեւն ելաւ շողքը դցեց
Հանդի վրայ, անուշ ջա՛ն.
Ցորեանք աւեց ու ոլորեաց
Ոսկի արտը շորշորան։

# ՌԱՆՉՊԱՐԻ ԵՐԳԸ

Խօսք՝ ԵՐՒԱՆԴ ԴԱԼՃԵԱՆԻ

Երաժշտ. ԿԱՐՈ ԶԱՔԱՐԵԱՆԻ



# ՇԷԿ ՏՂԱ

Խօսք՝ Ժողովրդական

Երաժշտ. ՑԱՐՈ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ



## ԲԱՆՎՈՐՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Խօսք՝ ԳՐԵԳԻ | Երաժշտ. ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆԻ




## ՔԱՂՀԱՆՈՂ ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Խօսք՝ ժողովրդական | Երաժշտ. ԹԱՐՕ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ



# ԵՍ ՆՈՒՌ ԵՄ

Խօսք՝ Ս. ՏԱՐՕՆՑԻԻ — Երաժշտ. Գ. ՄԻՐԶՈՅԵԱՆԻ




Ես նուռ եմ, սիրով հասած եմ
Ջահել տղին մրգամուռ եմ,
Արտաքի պէս լա՛փ կրտամ —
Սէր ու սավդա կը վառեմ։

Ա՛յ տղա՛, հանդ ես գընում,
Կոլեկտիվ արտ ես գընում,
Կեղին թեքել ես հակերդ —
Էնպէս հըպա՛րտ ես գընում։

Տերտագտորը քըքում ես,
Մըրգով լեցը ալուն ես,
Աչքով, ունքով ես անում —
Սիրտ ու հոգիս մաշում ես։

Էսօր ինձ տա՛ր ես գաղել,
Կուլակին քա՛ր ես գաղել,
Կոլեկտիվի ամբէջը —
Գիւղի մէջ սա՛ր ես գաղել։

Հա՛մ խելօք ես, հա՛մ տաղ ես.
Մի ակտիվ կոմսոմոլ ես.
Կոլեկտիվըդ չէն մընա —
Սիրով ու սուփրով բոլ ես։

# ԿԱՆՉԸ

Խօսք՝ ՊԱՀԱՐԻ — Երաժշտ. ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆԻ



Ելէք, ելէք միահոյլ,
Թողէք ձեր հին կեանքը թոյլ,
Էս արեւոտ վառ օրին
Կապէք եղներն արօրին։

Հեյ դարաւոր խուղերից,
Աւաններից, գիւղերից,
Թաց պատերից, մութ հորից,
Ելէք, ելէք, դուրս նորից։

# ԿՈԼԽՈԶԱԿԱՆ ՏՐԻՈԼԵՏՆԵՐ

Խօսք՝ Զ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ — Երաժշտ. ԱՐՏ. ՆԵՐՍԷՍԵԱՆԻ



Մեր դաշտերում չէն ու արձակ
Մաշինի կանչն է արշաւում,
Տրակտորն է տողեր շարում
Մեր դաշտերում չէն ու արձակ։

Եւ կոլխոզնիկն է համարձակ
Մկաններն ու կամքը լարում,
Մեր դաշտերում չէն ու արձակ
Մաշինի կանչն է արշաւում։

Բորբոքւում է յոյզ ու եռանդ
Մեր արտերում խրոխտականչ,
Կոլխոզնիկի երթն՝ աննահանջ
Բորբոքւում է յոյզ ու եռանդ։

Ծիծաղում են դաշտեր ու հանդ
Ու ձայնակցում առաջ, առաջ...
Բորբոքւում են յոյզ ու եռանդ
Մեր արտերում խրոխտականչ։

Արշաւում են օրերն ահա
Կոլխոզական հուր եռանդով
Մեր դաշտերով ու մեր հանդով
Արշաւում են օրերն ահա։

Կոլխոզնիկի սրտի վրայ
Յաղթանակի երգն է յաղթող.
Արշաւում են օրերն ահա
Կոլխոզական հուր եռանդով։

# ՆՈՐ ԳՈՒԹԱՆ

Խօսք՝ ԱՐ. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ — Երաժշտ. մշ. ՎԱՐԴԳԷՍ ՏԱԼԵԱՆԻ



# ԿՈԼԽՈԶԻ ԱՂՋԻԿ

Խօսք՝ Մ. ԿՈՐԻՒՆԻ

Երաժշտ. Դ. ՂԱԶԱՐԵԱՆԻ



Կանգնել ես հպարտ կոլխոզի արտում,
Այտերդ ձեռքիդ հասկերի պէս վառ,
Ու քո վառ աչքն է ծաղկել իմ սրտում,
Կոլխոզի աղջիկ, աչերդ պայծառ։
Հէ՜յ ջան, հեյ ջա՜ն, հէ՜յ ջան, հէ՜յ,
Ջա՜ն, ջահել աղջիկ, հաստատ ու յամառ,
Վառ երգեր եմ ես հիւսել քեզ համար։

Մեր ընթացքի հետ այս արագահոս
Անվախ քայլում ես դու մեզ հետ առաջ,
Դարձել ես մեր նոր օրերի հերոս,
Կոլխոզի աղջիկ, ե՛ւ արի, ե՛ւ քաջ։
Հէ՜յ ջան...

Մի անհուն սիրով ես քեզ սիրեցի,
Ծփուն արտերի ոսկեվարս գրկում.
Անունդ այնպէս, պայծառ գրեցի
Կոլխոզի աղջիկ, իմ սրտի գրքում...
Հէ՜յ ջան...

# ՕՐՕՐ

Խօսք՝ Ժողովրդական

Երաժշտ. ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆԻ



# ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Մշ.՝ ՍՊ. ՄԵԼԻՔԵԱՆ



# ԵՍՕՐ ՋՈՐԸ ՆՈՐԵԼ Է

Խօսք՝ Ժողովրդական

Երաժշտ. ԵԱՐՈ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ



# ՊԱՐԵՐԳ

Խօսք՝ ՎԱՐՍԻԿԻ

Երաժշտ. ՌԻԴԱՑԻ

Alegro



Գարուն է եկել պէս պէս շողերով,
Մեր սիրտն է լեցուեր անուշ խաղերով,
Դուրս արի՛ աղջիկ, մէկ գէմքըդ տեսնեմ,
Նազերով աղջիկ նազանքիդ մեռնեմ։
Հէ՜յ լէ, լէ, լէ, լէ դուն անո՛ւշ աղջիկ,
Հէ՜յ լէ, լէ, լէ, լէ նազերով աղջիկ,
Խալերով աղջիկ նազանքիդ մեռնեմ
Դուրս արի՛ աղջիկ, մէկ գէմքըդ տեսնեմ։
Հասակըդ բարակ շրթներդ նուռի,
Սէրով է լեցուեր աչերըդ հուրի·
Դուն մեր սարերի կարմիր կակաչն ես
Էս ջահել տղի սրտի ճոկանն ես։
Հէ՜յ լէ, լէ, լէ, լէ դուն ջահել աղջիկ,
Հէ՜յ լէ, լէ, լէ, լէ շողերով աղջիկ·
Նազերով աղջիկ նազանքիդ մեռնեմ,
Դուրս արի՛ սիրուն, մէկ գէմքըդ տեսնեմ։
Բարձր սարերի իմ ալխայժ մարալ,
Ծըմակի միջին դու մշտադալար,
Մազերըդ հուսկ – հուսկ ու մէջքիդ քեամար,
Աչքերըդ խումար եւ ունքըդ կամար։
Հէ՜յ լէ, լէ, լէ, լէ կոլխոզի աղջիկ,
Հէ՜յ լէ, լէ, լէ, լէ վարդերով աղջիկ·
Խալերով աղջիկ նազանքիդ մեռնեմ
Դուրս արի՛ սիրուն, մէկ գէմքըդ տեսնեմ։
Ազատ լեռներու կատարին կանգնած
Նայում ես հեռու, դաշտերուն ծաղկած,
Դաշտերուն ծաղկած կարմիր օրերու,
Աչքերըդ ծով է վառ–վառ յոյսերու։
Հէ՜յ լէ, լէ, լէ, լէ դուն կարմիր աղջիկ,
Հէ՜յ լէ, լէ, լէ, լէ խալերով աղջիկ,
Նազերով աղջիկ նազանքիդ մեռնեմ,
Դուրս արի՛ սիրուն, մէկ գէմքըդ տեսնեմ։

# ՄԵՐ ԿՈԼԽՈԶԻ ԱՐՏԵՐԸ

Խօսք՝ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Եր. Տ. ԱՒԵՏԻՍԵԱՆ



Մեր կոլխոզի արտերը
Տրակտորը վարել ա,
Կոլխոզն այսօր ծովի պէս
Կանաչել ա, ծաղկել ա։ (կրկնել)

Մեր կոլխոզի արտերը
Նախշուն բերքով հասել ա,
Ցորենի ծով հասկերը
Ճոխ բերքերով լցվել ա։ (կրկնել)

Օրօրւում են հասկերը
Ու բացւել են վարդերը,
Հազար երնէկ նոր կեանքին՝
Շենացել են դաշտերը։ (կրկնել)

# ՋԱՆ ԲԱՄՊԱԿ

Խօսք՝ Ս. ՇԱՑՐՕՆ

Եր.՝ Մ. ՄԱԶՄԱՆԵԱՆ



Բացւել ես ջա՛ն, հե՛յ բամբակ,
Լցւել ես, ջա՛ն, մե՛ր բամբակ
Զատենք անենք փաթիլը,
Բարդան անենք քե՛զ բամբակ։

Արի՛ նազուկ, ջա՛ն, բամբակ,
Մալանչ անեմ, ի՛մ բամբակ։
Թելեր, թելեր անելով
Քեզ փայփայեմ, ի՛մ բամբակ։

Սպիտակ չիթ ու կտաւ
Քեզնից գործեմ, հե՛յ բամբակ,
Գոյներ անեմ, որ խնդա
Սիրուն դէմքդ, մեր բամբակ։

# ԿՈԼԽՈԶ ԱՂՋԻԿ

Խոսք՝ Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ　　　　　Եր.՝ Մ. ՄԱԶՄԱՆՅԱՆ



Անուշ ժպտաց արփին նարինջ,
Արտերին հասուն.
Բրիգադիր ես, կոլխոզ աղջիկ,
Գործում սիրասուն:
Հուսաքեղ ես կոլխոզ կանանց
Էդ քո բրիգադում.
Ու գործում էք խինդով անանց
Բամբակի արտում:

Ուժը լարած, եռանդ դառած
Ու սէրը սրտում.
Եարիդ մրցման կանչով տարւած՝
Ցաղթող ես, խնդուն:
Երգը երգին, ձեռքը ձեռքին
Արտերում հասուն.
Հա՛ դիզում էք — բերքը բերքին,
Գործում սիրասուն:

Պայքարում ես էդ քո ուժով,
Տոկուն ու յամառ.
Կոլխոզ արտը բամբակի ծով
Ֆաբրիկի համար:
Հուսաքեղ ես կոլխոզ կանանց
Էդ քո բրիգադում,
Ու գործում էք խինդով անանց
Բամբակի արտում:

## ԶԱՐ ԶԸՆԳԸ

(Պարերգ)

Մշակում՝ ԿՈՄԻՏԱՍԻ

Զար զընգը, զար զընգա, թող զընգա,
Պարենք գիշեր լուսնկա:
Զար զընգը, զար զընգա, թող զընգա,
Ելի պարը բոլորա,
Զար զընգը, զար զընգա, թող զընգա,
Նարս մէջին մոլորա:

# ԿԱՐԲԻԴԻ ԵՐԳԸ

Եր.՝ Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ



Որքան հուրեր, որքան վիժանուտ
Վարսեր կրակի — օդը ալիքող։
Այդ արի՞ւն է արդեօք այդպէս թնժանում
Իր ծիրանահանգ ու տաքուն երգով,
Թէ բաբախում է այնտեղ շառաչուն —
Աշխատանքային մեր երկրի սիրտը։
Մարմնաւորւում է այնպէս յարաճուն
Երկաթաւորւող երգերն ու խինդը։
Որքան հուրեր, որքան վիժանուտ
Վարսեր կրակի — օդը ալիքող,
— Սոցիալիստական հուրն է թնժանում
Եւ յաղթանակում երկաթէ երգով։

# ԳԱՐՈՒՆ



# ԿՈԼԽՈԶԱԿԱՆ ՊԱՐԵՐԳ

Խոսք՝ Ա. ԾԱՑՐՈՆ | Եր.՝ Ա. ՍԱԹԵԱՆ



Կոլխոզական պարն անենք,
Ահէլ-ջահէլ պարն անենք,—
Ղա՛մթ անենք, որ կեանքը
Սոցիալիզմի հասցնենք:

Հո՛պ, դէ՛ տուէք, մահու հարուած կռնակին,
Դաշնակներին թեւ ու թիկունք կուլակին,—
Հո՛պ դէ թուէ՛ք, ջա՛ն, դէ թուէք, դէ թուէ՛ք,—
Ամուր պահենք — էս մեր կեանքը թանգագին:
Նա՛-նա՛-նա՛յ, նա՛-նա՛-նա՛յ, նա՛-նա՛-նա՛յ...

Բարը քարին շարելով,
Լէ՛ն հողերը վարելով,—
Տրակտորով, կոմբայնով,
Գրոհում ենք արտերով:

Հո՛պ. դէ տուէ՛ք — եւայլն...

Մենք անդրդուէլ, յաղթաւոր,
Անհատական չքաւոր,—
Մեր աչքերը բացուեցին
Դարձանք մենք կոլխոզաւոր:

Հո՛պ, դէ տուէ՛ք — եւայլն...

Սոցիալիզմի ճամբին ենք,
Հերոսական թափի՛ ենք,—
Մենք Լենինեան զէնքերով,
Վառ ապագան կ'տեսնենք:

Հո՛պ, դէ տուէ՛ք — եւայլն...

П 1377

# ՆՈՐ ԵՐԳ

Երաժշտ. ՍԳ. ՄԵԼԻՔԵԱՆԻ ԵՒ ՄԻՔ. ՄԻՐԶԱԵԱՆԻ



Ընչի՞ համար դու չես սիրում էն աղջին,
Բոյը սիրուն, անունը սիրուն էն աղջին.
Ցանքը կիտած, բերքը արած էն աղջին,
Գլխին սև փափախ դրած էն աղջին,
Մաուզերը կողքին կախած էն աղջին,
Մեր հանդերից հեռու փախած էն աղջին,

Ընչի՞ սիրեմ բեխերը ցից էն աղջին,
Հողը դնեմ աշխարհի ցից էն աղջին,
Ձեռքը տառուղ, խելքը տառուղ էն աղջին.
Թալան տուող լեռը ու հարուստ էն աղջին,
Մաուզերին ձեռքը դրած էն աղջին,
Ըռանչպարի շիվան ու լաց էն աղջին,

# ՆՈՐԵԿ ԳԵՂՋԿՈՒՀԻ

Երաժշտութիւն՝ Ց. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ



Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի,
Գարունդ է եկել, տանից դուրս արի.
Արեւը կարմիր կապել է կամար,
Կարմիր օրեր է բերել քեզ համար։

Դաշտերը կարմիր լայն ու ընդարձակ
Կանչում են ընկեր, եղիր համարձակ.
Հերրի պէս ուժեղ, Թերրի պէս կըտրուկ,
Հին կույր կրոնին մի՛ լինի սարուկ։

Քանդիր հին գիւղը — բանտը սեւ ու մութ.
Նորութեան համար եղիր լուսամուտ,
Նորը հնի դէմ հանիր պայքարի,
Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի։

# ԿԻՒՐՃԻ ԱՂՋԻԿ

Խօսք՝ Գ. ՍԱՐԵԱՆ

Երաժ. Դ. ՂԱԶԱՐԵԱՆ



Որ սիրտ հուր սերմեր ցանեմ, ծաղիկներ բուսնին,
Սրտիդ բոյրով, մարալ աղջիկ, իմ սիրտը սնեմ։

Կիւրճի՛ աղջիկ, ես քեզ տեսա սովխոզի արտում,
Ոսկի հատիկ լազուրի պէս ժպտում էիր դու,
Կիտել էիր շեղջը բերքիդ՝ լազուրը դեղին,
Կանչում էիր ձայնով երգիդ՝ քո սիրած տղին։

Համբուրել էր արեւը շէկ այտերդ մարմար,
Աշխատում ես, կիւրճի աղջիկ, մեծ գործի համար.
Ու ժպտում էր հոգիդ վճիտ ու դէմքդ վառման,
Ձեր սովխոզի արտի միջի լազուրի նման։

# ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅԻ



Ես մի պինդ պաղ էյի,
Դու մրմռում լացիր·
Քո հրեղէն արցունքով
Ինձի հալեցիր։

Ես մի չոր ծառ էյի,
Դու Գարնան արեւ.
Քո սիրով ծաղկեցան
Իմ ճիւղն ու տերեւ։

Թէ ինձ չէյիր առնի,
Ինչո՞ւ սիրեցիր,
Մի բուռ կրակ եղար
Սիրտըս էրեցիր։

# ԱՐՏԵՐԸ ԾԼԵԼ ԵՆ

Խոսք՝ Ա. ՎՇՏՈՒՆՈՒ

Երաժ. Ա. ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆԻ



Արտերը ծլել են,
Արտերը կանաչ են,
Արտերը շնչում են,
Արտույտը երգեր կան,
Նրանք ինձ ճանաչ են
Ու բարձր հնչում են։

Արտերը ծովի պես,
Ծիծաղով ծփում են,
Ծփում են ծովիցը,
Ծլերը ծարաւ են,
Ծլերը ծծում են,
Ծծերը հողիցը։

Արտերը փռվել են,
Անափ ու անծիր են,
Ծովու պես բացվել են,
Երկինքը շաղել են,
Ամպերը անցել են,
Ծիլերը թացվել են։

Ու ամեն մի ծիլը
Մեր երկրի արտումը
Ժպտավառ եւ առատ է.
Հին աշխարհի դէմը,
Մոլեգին մարտումը
Մահացու գնդակ է։

# ԵՐԿԻՆՔՆ ԱՄՊԵԼ Է

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Երկինքըն ամպել է,
Ի՜նչ անուշ թոն է.
Գամ դըռնէն անցնեմ՝
Հողեակս հոն է։

Երկինքն ամպել է,
Ի՜նչ անուշ երակ.
Սըրտիս մէջ լցուաւ
Մի բուռը կրակ։

Երկինքն ամպել է,
Գետինը մութ է.
Ես քեզ ուզել եմ,
Թող ասեն՝ սուտ է։

Երկինքն ամպել է,
Գետինը թաց է.
Եարըս քնել է,
Երեսը բաց է։

Երկինքն ամպել է,
Գետին շաղերով.
Ես քեզ սիրել եմ
Անուշ խաղերով։

Շորո՛ր դու, չէկիկ եար,
Տեսնեմ դու ո՞ւմն ես.
Իրաւ եմ ասում
Դու իմ սրտումն ես։

# ՍԱՐՈՆ ՈՒ ՄԱՐՈՆ



*Սարոն.*

*— Գարունն եկավ, Մարո ջան,*
*Արեւ եկավ վառուն,*
*Բըլբըլում են, նարո ջան,*
*Սառն աղբյուրներն, առուն,*
*Մեր երկիրն էլ, Մարո ջան,*
*Ինչ որ ծաղկած գարուն,*
*Էս ի՞նչ անուշ ու վառ ես,*
*Ջան սովետի երկիր։*

*Մարոն.*

*— Արևն եկավ, Սարո ջան,*
*Դաշտից դուրը տարին,*
*Տրակտորդ, նարո ջան,*
*Բըռնիր դեսը արի,*
*Փեշըդ ծըռտիր, Սարո ջան,*
*Մեր արտերը վարի,*
*Էս ի՞նչ անուշ ու վառ ես,*
*Ջա՜ն, սովետի երկիր։*

*Սարոն.*

*— Մեր գեղումը, Մարո ջան,*
*Կին – բաժին ես դառել*
*Սաղ կանանցը, նարո ջան*
*Ժողովի ես տարել.*
*Հին ադաթը, Մարո ջան*
*Ոտնատակ ես արել։*
*Ջա՜ն, սովետի երկիր։*
*Էս ի՞նչ անուշ ու վառ ես։*

## ՀԱՐՍԻ ԵՐԳԸ

Խարս վեր արի, նազ, մի անէ,
Փէշերդ տուր վեր, թող մի անէ,
Խարս վեր արի քեո թախտէն,
Գանգատ մ'անէ քեո թախտէն,
Խարս վեր արի քեո յօդից,
Գանգատ մ'անէ քեո թախտից։

## ՃԱԽԱՐԱԿԻ ԵՐԳԸ

Մանիր, մանիր իմ ճախարակ
Մանիր, սիպտակ մալանջներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցավեր։

Ցըվրանիկս գուլպա չունի,
Հանդն է գնում ոտաբաց.
Գաբրիէլս չուխա չունի,
Միշտ անում է սուգ ու լաց։

# ԿՈՄՍՈՄՈԼԿԱՆ ՈՒ ԿՈՄՍՈՄՈԼԻՍՏԸ

ԽՆԿՈ ԱՊԵՐ



ԿՈՄՍՈՄՈԼԿԱՆ․ —

Ուր որ գընաս յետից եմ,
Թեւ ու թըռիչք մօտիդ եմ,
Կոմսոմոլիստ ընկեր ես,
Ուր որ դու ես — էնտեղ ես:

ԿՈՄՍՈՄՈԼԻՍՏԸ.—

Կոմսոմոլում գըրուած ենք
Կուլակի դէմ սըրուած ենք,
Նոր կենցաղով մենք գիւղ գանք —
Հընի բուրդը քամուն տանք:

ԿՈՄՍՈՄՈԼԿԱՆ․ —

Չարչի, կուլակ, մուկ, մորեխ,
Մեր բատրակը անտըրեխ․
Չարչի, կուլակ, հուշտ անենք,
Գիւղ – գիւղացի կուշտ անենք:

ԿՈՄՍՈՄՈԼԻՍՏԸ.—

Գիւղին բերենք նաւթ ու աղ,
Աման – չաման, տաշտ ու մաղ,
Ուրագ, կացին, փայտ ու մեխ,
Մըկրատ, մատնոց, թել ասեղ:

ԿՈՄՍՈՄՈԼԿԱՆ․ —

Գիւղ ու քաղաք հարեւան,
Թող չէն մընա Երեւան,
Մենք նըրան տանք նիւթեղէն,
Տեղը բերենք նոթեղէն:

ԿՈՄՍՈՄՈԼԻՍՏԸ.—

Շըղթան ունի շատ օղակ,
Միացրինք գիւղ ու քաղաք,
Էս մեր գիւղը նոր է, նոր,
Գիւղն է եկել տըրակտոր:

ՄԻԱՍԻՆ.—

Նոր կենցաղը եկել է,
Գիւղը կարմիր ներկել է,
Աղջի տըղին յաւ հասար,
Աղջիկ, տըղին հաւասար:

# ՋԱՆ ԱԶՐԲԵՅՋԱՆ

Խօսք՝ Ա. ՎՇՏՈՒՆԻ

Երաժշտութիւնը՝
Ա. Տէր-Հովհաննիսյանի



Ջա՜ն,
Ադրբէյջա՜ն,
Էյ ջա՜ն,
Իգի՛թ ես հիմի,
Ջահե՛լ։
Վառել ես
Բիւրամոմ ջահեր,
Վառել ես
Շող,
  Շէմս — արեւ.
Ջա՜ն,
Ադրբէյջա՜ն,
Էյ ջա՜ն,
Սաբահ խէ՛յր,
Սալա՛մ
Բարե՛ւ,
Ջա՜ն։

Պարզել ես
Բազուկդ կուռ
Դէպի
Քերբելա,
Մեքքա,
Բանդում ես
Ալլահը ծեր.
Քանդում ես
Մինարա,
Մզկիթ...
Ջա՜ն,
Ադրբէ՛յջա՜ն,
Էյ ջա՜ն,
Սաբահ խէ՛յր,
Սալա՛մ,
Բարե՛ւ.
Ջա՜ն, ջա՜ն, ջա՜ն։

# ՈՍԿԷ ՄԱՏՆԻՔ

Խօսք՝ ժողովրդական

Ձայնագրում ԿՈՄԻՏԱՍԻ

Պարտէզ ունիմ դրախտ ա,
Ծաղիկ ծաղկունքի վախտ ա.
Գէշ տղա, սիրուն աղջիկ,
Էս էլ մի ուրիշ բախտ ա։

Ոսկէ մատնիք մատներիս,
Շողքըն ընկաւ երեսիս,
Աքլոր չուտով մի կանչի,
Անքուն կանես իմ եարիս։

## ՀՆՁԻՈՐԻ ԵՐԳԸ

Խօսք՝ Ժողովրդական

Երաժշտ․ ՑԱՐՈ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ



## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԵՐԹԸ

Խօսք՝ ԽԱԼԱԹԻ

Երաժշտ․ ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆԻ



# ՔԵԼԵՐ ՑՈԼԵՐ

Մշակում՝ ԿՈՄԻՏԱՍԻ



Քելեր, ցոլեր իմ եարը,
Աղբիւրի տակին
Քելեր, ցոլեր՝ իմ եարը,
Կանաչ տաւով,
Ճանաչ տաւով,
Ե՛կ տըղա,
Բաղդամն արի,
Շաղդամն արի,
Շէ՛կ տըղա։

Քելեր, ցոլեր իմ եարը
Գերանդին ուսին
Քելեր, ցոլեր իմ եարը.
Հով ծառի տակ,
Զով ծառի տակ,
Եկ, տըղա,
Հունձ ես արել,
Քրտինք դառել,
Շէ՛կ տըղա։

Քելեր ցոլեր՝ իմ եարը.
Ջան աչքի լուսին,
Քելեր ցոլեր իմ եարը.
Հով է, քընի՛ր,
Զով է, քընիր,
Շէկ տըղա,
Հունձ ես արել,
Շատ բեզարել,
Շէ՛կ տըղա։

# ԿԱԹ ԿԹԵԼՈՒ ԵՐԳԸ

Խօսք՝ ժողովրդական — Երաժշտ. ԿՈՄԻՏԱՍԻ

Հինգ էծ ունիմ ու էծներով,
Իլիլի, տիլիլի.
Կայ կը կթեմ պըղընձներով,
Իլիլի, տիլիլի.
Սեր կը չափեմ կալի չափով,
Իլիլի, տիլիլի.
Եղ կը հանեմ լըւի տըկով։
Իլիլի, տիլիլի։

# ՔԵԼԷ ՔԵԼԷ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Քելէ, քելէ, սոյիդ մեռնիմ,
Քո չինարի բոյիդ մեռնիմ,

Քելէ, քելէ, քօղիդ մեռնիմ,
Քու լուսընկա շողիդ մեռնիմ:

Քելէ, քելէ, բերնիդ մեռնիմ,
Քո սիրունիկ ձէնիդ մեռնիմ:

Քելէ, քելէ, ձեռիդ մեռնիմ,
Քո հուր կրակ սէրիդ մեռնիմ:

Քելէ, քելէ, աչքիդ մեռնիմ,
Քո անուշիկ պաչիդ մեռնիմ:

# ԳԱՐՈՒՆ Ա

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Իմ եարն ինձնից ա սառել,
Ա՜խ, չորնա՛, վա՜խ, ա՛յ եար,
Չար մարդու լեզուն:

Քամին փչում ա պաղ պաղ,
Լերդ ու թոքս անում ա դաղ:

Եա՛ր, ինձ բեմուրա՛դ արիր,
Սէրըդ ինձնէ զատ արիր:

## ԱՂՋԻԿ ՆԱԶԵՐՈՎ, ՆԱԶԵՐՈՎ

Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ



Աղջիկ նազերով, նազերով,
Դիլբար, նազերով, նազերով,
Աղջիկ մի գար մեր կալերով,
Դիլբար, մի գար մեր կալերով:

Դիլբար ձին էր նալերով,
Աղջիկ մի գար մեր կալերով:

Աղջիկ մի գար, մեր տուն ծուխի,
Դիլբար մի գար, մեր տուն ծուխի
Կարմիր իրեն, աչքեր թուխ ի:

Արի երթանք հորթկա խոտիկ,
Դիլբար, երթանք հորթկա խոտիկ.
Տեսնենք վե՞ր հարն ի խորոտիկ:

Աղջիկ նազերով, նազերով,
Դիլբար, նազերով, նազերով ...

## ՅՈՑ ՆԱԶԱՆ ԻՄ

Խոսք ժողովրդական
ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ

Երաժշտ. Մշակում
ԿՈՄԻՏԱՍԻ և Գ. ՍԻՒՆԻԻ



*Գարնան սիրուն ծաղիկ ես,*
*Հո՛յ Նազա՛ն իմ,, Նազա՛ն իմ,*
*Ինձ համար աղունիկ ես.*
*Ջա՛ն, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ,*
*Գլխիս վըրով պըտտիս տուր,*
*Հո՛յ Նազա՛ն իմ,, Նազա՛ն իմ,*
*Նախշուն – թեւ թիթեռնիկ ես:*
*Ջա՛ն, Նազա՛ն իմ, Նազա՛ն իմ:*
*Եա՛ր ջան, դու թարով եկար,*
*Կանաչ սարերով եկար,*
*Եար խոր ձորերով եկար:*
*Սարե՛ր, ձորե՛ր ես կացէ՛ք,*
*Իմ եարի ճամբէն բացէ՛ք.*
*Եար եարի հետ խօսելիս*
*Ականջ արէք իմացէք:*
*Նըշի ծառին նուշ կըլնի,*
*Վարդի հոտն անուշ կըլնի,*
*Երնէկ էն աղջըկան՝*
*Սիրած եարին թուշ կըլնի:*

# ԱՐԻ ՄԱՆԱՆ

Երաժշտական մշակում՝ Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ



Արի Մանան, արի՛, գնանք մեր տունը.
Գիշեր ցերեկ զուրկ է աչքերիս քունը, ջան,
Ջան Մանան ջան, ջան Մանան ջան, ջան։

Մանան սարէն կուգա, շալկինը ժախ է,
Ոսկեբել մազերը թիկունքին կախ է, ջան.
Ջան Մանան ջան, ջան Մանան ջան, ջան։

Երկինքը ամպել է, գետինը թաց է,
Մանանի թիկունքը կիսէն յետ բաց է, ջան.
Ջան Մանան ջան, ջան Մանան ջան, ջան։

# ԲԱՄՊԿԻ ՏԱԿԻՆ

Ռ. ՄԵԼԻՔՅԱՆ



Դու դաշտը կուգաս հուլա – հուլա
Կու ընմանիս բամբկի քուլա.
Աչքըս տեսաւ, սիրտըս կուլա, Գիւլ – Նուբար ջան
Կու ընմանիս բամպկի քուլա։

Մեր ջուխտ գութան դաշտ կու բանի.
Գիւլ – Նուբարը հաց կու տանի.
Աչքով, ունքով մարդ կու սպանի, մարդ կու սպանի
Գիւլ – Նուբարը հաց կու տանի։

# ԿԱՔԱՒԻ ԵՐԳԸ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Քու բուն հիւսած ծաղիկներով
Շուշան, նարգիզ, նունուֆարով.
Քու տեղ լցուած ցող ու շաղով,
Քնես — կելնես երգ ու տաղով:
Սիրունիկ ...

Քու թեւ փափուկ ու խատուտիկ,
Գդտիկ կտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր – կարմիր տոտիկներով
Կը շորորաս ճուտիկներով:
Սիրունիկ ...

Երբ կը կայնես մամռոտ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին,
Սարեր ձորեր զուարթ կանես,
Դարդի ծովէն սիրտ կը հանես:
Սիրունիկ ...

## ԵՍ ՔԵԶ ՏԵՍԱ

Խօսք՝ ժողովրդական — Ձայնագրում՝ ԿՈՄԻՏԱՍԻ

Ես քեզ տեսա, սիրտըս ելաւ ցիր ու ցան.
Եար արի, եար արի, ախ, արի, արի,
Վախ արի, արի,
Ես քեզ ինչ արի:

Լուսնակ գիշեր, սիրտըս կուլա քեզ համար,
Եար արի, եար արի, ախ, արի, արի,
Վախ արի, արի,
Ես քեզ ինչ արի:

# ՉԻՆԱՐ ԵՍ

Ձայնագրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ




Մեր դրանէն հեռանալ մի, նար, նար,
Նար քո Աստուած կը սիրես, նար, նար,
Հեռու ես, մոռնալ մի, նար, նար:
Նար, նա նայ, նայ, նայ, նայ,
Նա նայ, նայ, նայ, նայ:

Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներս շաղով թաց ա·
Ինձանից հեռացել ես,
Աչքերըս լիքը լաց ա:

Ես գիշեր երազ տեսայ,
Հերկերըս վարած տեսայ,
Ամօթ քեզի, այ տղայ,
Քու եարը տարած տեսայ:

# ԱՆՏՈՒՆԻ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ




Սեւ ծով մեմ տեսէ, ալիտակն էր բոլոր·
Ալին կը զարնէր, չէր խառնի հիրար·
Էն ո՞րն է, տեսնէ մէկ ծովն երկըթալոր, —
Անտունին սիրտն է պղտոր ու մոլոր:
Ախ, իսկի մի լնիք սըրտիկ սեւաւոր:
Այ, տո յան տըննաւեր:

## ԾԱՂԿՈՑ ՄՏԱ

Մշակեց՝ Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ



Ազիզ եարիս ձէն տուեցի, ձէն չկար,
Ծաղկանց միջին, անուշ վարդս էլ չկար։

Անգութ եարս, սրտիս հետը խաղ արեց,
Թողեց գնաց, իմ ջիգեարը դաղ արեց։

Երգիչ դարձայ, պատեցի սար ու քար,
Ձէն տուեցի, անուշ վարդս էլ չկար։

Աստուած սիրէք, ասէք, եարս ո՞ւր գնաց,
Ազիզ եարս, անուշ վարդս ո՞ւր մնաց։

## ՍԱՐԻ ԱՂՋԻԿ

Ներդաշնակեց՝ Ա. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ



*Եղնիկ եմ նետը կրծքիս,*
*Դիլէ եաման...*
*Տերեւ եմ խելք ու մաքիս,*
*Ախ, մէրըդ մեռնի...*

*Մին ու հարիւր մեղքացիր,*
*Դիլէ եաման....*
*Թոյն մի անա թէժ վերքիս,*
*Ախ, մէրըդ մեռնի...*

# ՏԸԼԷ ԵԱՄԱՆ



Տըլէ եաման, արեւն առեց վառ ծովուն
Տըլէ եաման, ես քեզ սիրի աշնան հովին
Եաման, եաման, եա՜յ:

Տըլէ եաման, վարդ բացուեցաւ քաղել չկայ,
Տըլէ եաման, եարս բարակ է սեղմել չկայ,
Եաման, եաման, եա՜յ:

Տըլէ եաման, արի եկեր սարի սեյրան
Տըլէ եաման, թէ տանողի տըղին վէրան:
Եաման, եաման, եա՜յ:

Տըլէ եաման, լուսինն ելաւ էս գիշերին,
Տըլէ եաման, եարս տեսա կէս գիշերին.
Եաման, եաման, եա՜յ:

Տըլէ եաման, մեր դուռ ձեր դռան դիմաց, դիմաց
Տըլէ եաման, հէրիք անես աչքով իմաց:
Եաման, եաման, եա՜յ:

# ՊՍԱԿ ՊՍԱԿ



Մածուն կուղեմ թան կը բերէ
Աղջիկ քո հօր հէրն անիծած
Դիր նանայենա......

# ԱԼԱԳՅԱԶ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Աղբեր իր ձին թամբել ա,
Եարոջ դըռնէն անցել ա:

Եարոջ դըռնէն անցել ա,
Ելէ դաշտը խաղցել ա:

Ելէ դաշտը խաղցել ա,
Անձրեւ եկէ, թըրջել ա:

Անձրեւ եկէ, թըրջել ա,
Արեւ գարկէ չորցել ա:

Արեւ գարկէ չորցել ա,
Թան կարմիր վարդ բացել ա:

Մեր դըռանը խընկի ծառ,
Գիւլում ջան,
Ձեր դըռանը խընկի ծառ,
Գիւլում ջան,
Խընկեններին ա բերել բար,
Գիւլում ջան,
Իմ խորոտիկ պզտիկ եար:
Գիւլում ջան:

Մեր դըռանը խընկի ծառ,
Նաշխուն բըլբուլ վըրէն թառ.
Երթար ու գար, շորոր տար,
Սիրուն եարին օրօր տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրէն թառ
Կարմիր խընձոր անել տար,
Ալւան ծաղիկ՝ տանել տար:

## ՏՐԱԿՏՈՐԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Վ. ԱՂԱԵԱՆԻ

Երաժշտ. Ս. ԴԵՄՈՒՐԵԱՆԻ

Անուշ — անուշ հովն է խաղում
Թաւիշ հանդերում,
Կոլխոզնիկի երգն է հընչում
Մեր ծով արտերում:

Էն տրակտորն է կանգնել հպարտ՝
Ժպտում արեւին,
Հերկում է նա հողը պարարտ
Գրկում արտերին:

Ու հրճւանքից սիրտն է թնդում
Ջահել էն տղի,
Բատրակ է նա, կեանք է կերտում,
Կեանքը նոր գիւղի:

# ԱՐՕՐՆ ՈՒ ՏԱՏՐԱԿ

Մշակեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Առաջ «Դու մի լա էս աշուն,
Չէ՞ վաղ կուգա բարի գարուն,
Լոյս կը բացուի վեր աշխարհում,
Դուռ կը բացուի խեղճիկներում,
Ես քեզ կառնեմ իմ թեւերում,
Թըռնեմ բարձրիկ վեր ծառերում,

Տանեմ, հանեմ վեր սարերում,
Բուն կը դնեմ մէջ քարերում,
Տուն կը շինեմ մէջ գազերում,
Երթիկ բանամ դէմ հով քամուն,
Ծուխ կը հանեմ հետ ամպերում, —
Մեր ցաւ կըտանք հարաւ քամուն։

# ՀԱԲՐԲԱՆ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ՏՂԱ — Չորեքդիմաց ծամ ունես,
Պստիկ աղջիկ, համ ունես,
Խունջիկ-մունջիկ մի անի,
Ինձ տանելու կամ ունես։

ԱՂՋԻԿ — Գութանըդ հոլա, հոլա,
Գութանիդ տակը քոլ ա.
Քանի գըժութիւն անես,
Քեզի տանողը տոլ ա։

ՏՂԱ — Ձեր տան տակին վար կանեմ,
Չար ագռավին քար կանեմ.
Թող իմ սիրածն ինձ տան,
Գըժութիւնս թարկ կանեմ։

ԱՂՋԻԿ — Ջուրը իմ նամբով կերթա,
Ցողածը վարդի թերթ ա.
Ինձ սիրող կըտրին տըղէն
Հազարին մէջ մի բերդ ա։

ՏՂԱ — Բուսել ես քաղի միջին,
Շամամի թաղի միջին.
Գիշեր ցերեկ միալար,
Դու ես իմ խաղի միջին։

ԱՂՋԻԿ — Աշուղի պէս խաղ ասա,
Բըլբուլի պէս տաղ ասա.
Ինչքան որ գովես արժէ
Իմ մօր գովական փեսա։

## ԲԱՐԻ ԼՈՒՍԻ




Հարսն ու աղջիկ հանդերձ ելան
Ղորչորալէն անուշ, անուշ,
Ծաղկանց հոտը անմահական,
Սորսորալէն անուշ, անուշ:

## ԵՍ ՊՈՒՃՈՒՐ



Ես պուճուր, խաբըս պուճուր
Արեւից մնացիմ,
Ով կտա ինձ հաց ու ջուր
Արեւից մնացիմ,
Արեւից մնացիմ խար ջան,
Բարեւից մնացիմ խար ջան,
Սիրել եմ կանչեմ:

Ալագեազ բարձր սար ա
Արեւից մնացիմ
Ջուրը հիւանդի դեղ ա
Արեւից մնացեմ.
Արեւից ...

Գնա, գնա, գալիս եմ
Արեւից մնացեմ.
Քըրտընել եմ լալիս եմ
Բարեւից մնացեմ:
Արեւից ...

# ՄԻ ԽՕՍՔ ՈՒՆԵՄ

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ

Մշ. Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ



Մազա՞մ էլ ոչ ով խաբ չէ սիրի, էս ի՞նչ արիր, էս ի՞նչ բան ա,
Էշխէմէդ ջանում իմ էլի, ման իմ գալի խանա խանա.
Էս դարդէն ոչ ով չը քաշէ, վուր մէ դանգին չի դիմանա
Սիրտըս լուբի պէս խորւեցիր իշխիդ կըրակով, աչկիլուս:
Դոստիրըս դուշման շինեցիր, խաղերուն ինչպէ՞ս դոստ անիմ.
Անցկացած օրըն չիմ տեսնում, քանի գուզէ որ պատս անիմ.
Աստուած վըկա, խիստ դըժւար է, գլուխըս ինչպէ՞ս դուս տանիմ
Ես մէ փուքըր նաւի նըման, քու էշխըն է ծով, աչկիլուս:
Դուզիմ բերանըս բաց անիմ, գովքըդ ասիմ թարիֆի պէս.
Տաս տարի է ման էմ գալիս փադիշահի շահիփի պէս
Օխտըն տարի էլ ման գու. քամ սազըն ձեռիս Ղարիբի պէս
Բուբա Շահսանամըս դուն իս, էլ չունիմ ոչ ով, աչկիլուս:
Թէկուզ հազար դարդ ունենամ, իս սըրտումըս ադ չիմ ասի
Իմ հուքմի հէքիմըն դուն իս, իս էլ ուրիշ Շահ չիմ ասի
Սայաթ-Նովէն ասաց. Զալում, իս էն մահին մահ չիմ ասի
Հէնչափ ըլի դուն վըրէս լաս մազըդ շաղ տալով, աչկիլուս:

# ԱՄԱՆ ՈՐՍՈՐԴ



Աման որսորդ ինձ մի խփիր
Էս լեռների մամա ջան, մառալէն իմ,
Սիրաւոր իմ, վիրաւոր իմ,
Էս լեռների մամա ջան, մառալէն իմ:

Բարձր սարից առուն է գալիս
Վարդ աղջիկներ մամա ջան, պաղից են գալիս
Սիրաւոր իմ, վիրաւոր իմ,
Էս լեռների մամա ջան, մառալէն իմ:

# Ի՞ՆՉ ԿՈՆԻՄ

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ

Մշ. Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ



ՍԱՅԱԹ ՆՈՎԵՆ —

Ի՞նչ կոնիմ հէքիմըն, ինչ կոնիմ ջարէն
Քու տըւածն ուրիշ դեղ է, ուրիշ դեղ:
Էրում է մըհալմըն, չէ լաւնում եարէն.
Քու տըւածն ուրիշ դեղ է, ուրիշ դեղ:

ՍԻՐԵԿԱՆՆ —

Ասաց թէ. «Հիռացի գըլխեմէս գընա,
«Քու ասածըն ուրիշ տեղ է, ուրիշ տեղ»:
«Էտ քու արարմունքըն քիզի չի մնա,
«Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ»,
ուրիշ տիղ աման ուրիշ տիղ:

ՍԱՅԱԹ ՆՈՎԵՆ —

Ասի թէ. «Էշխէմէդ չիմ հանգչում տանըս,
«Ձեռնիրըս հըլացաւ չէ շինում բանըս,
«Էրւեցաւ ջիգարըս, մաշւեցաւ ջանըս,
«Քու տըւածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ»:

ՍԻՐԵԿԱՆՆ —

Ասաց. «Իմ դիդեմէն քիզ չը կա չարա.
«Գընա թէ խիլք ունիս գլխիդ ճար արա,
«Թէ չէ անիլ կուտամ քիզ փարա փարա.
«Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ»,

ՍԱՅԱԹ ՆՈՎԵՆ —

Ես բլբուլ իմ, վարդըս մընաց խարումըն.
Կըրակ դրիր սըրտիս խուցի եարումըն.
Վունց գըրանքումըն կա վունց դաւթարումըն
Քու տըւածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ:

ՍԻՐԵԿԱՆՆ —

Ասաց թէ. «Քի զարար՝ շինեցիր շահըդ.
«Կըտրեցիր ադաթըդ, կըտրեցիր ահըդ.
«Մի վիթի արունըդ, մի շանց տա մահըդ,
«Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ»:

ՍԱՑԱԹ ՆՈՎԷՆ —

Ասի թէ․ «Մազիրըդ սուրմա իս անում․
«Հէնց գիդիս չիմ գիդի, խաբ, չիմ իմանում․
«Սէրըդ ինձ մահ դարաւ էլ չիմ դիմանում,
«Քու տըւածըն ուրիշ դիզ է, ուրիշ դիզ»:

ՍԻՐԵԿԱՆՆ —

Թագաւորի թագի լայիղ քարըն իմ,
Շիրինի պէս Ֆահրադի դիդարըն իմ,
Ես էն գըլխէն Սայաթ Նովու խաբըն իմ,
Քու ասածըն ուրիշ տիզ է, ուրիշ տիզ:

ՍԱՑԱԹ ՆՈՎԷՆ —

Հիդըս խօսի, մի կենա խըռովի պէս․
Տալղա տըւիր գեմիս տարաք ծովի պէս․
Կու մեռնիմ, — չիս տեսնի Սայաթ Նովի պէս․
Քու տըւածըն ուրիշ դիզ է, ուրիշ դիզ:
աման ուրիշ դիզ:

# ԴՈՒՆ ԷՆ ԳԼԽԷՆ

ՍԱՑԱԹ ՆՈՎԱ

Մշ․ Ս․ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ



Դուն էն գլխէն իմաստուն իս․ խիլքդ ջիմարին բաք մի՛ անի․
Լըրազումըն տեսածի հիդ միզի մէհէտար մի՛ անի,
Ես խամ էն գլխէն էրած իմ, նուրմէկանց քարաք մի անի,
Թէ վուր, գիտիմ, բէզարիլ իս, ուրիշին սարաք մի՛ անի:

Զը կա քիզ պէս հուքմի հեքիմ՝ դուն Բուստամի Զալ, բաքաւուր․
Ասկըդ ասկերումըն գովծ, համ դուն իս գոզալ բաքաւուր․
Թէ էսանց էլ սուչ ունենամ գըլուխս արա տալ, բաքաւուր․
Մըտիկ արա քու Ստեղծողին՝ նահախ տիղ ղազաբ մի՛ անի:

Քանի կուզէ քամին տանէ՝ ծովումէն աւազ չի՛ պակսի․
Թէկուզ ըլիմ, թէկուզ չըլիմ՝ մէջլիսներումն սազ չի՛ պակսի․
Թէ կու պակսիմ, քի՛զ կու պակսիմ՝ աշխարհիս մէ մազ չի՛ պակսի՝
Սայաթ—Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի:

# ՉԻՍ ԱՍՈՒՄ ԹԷ ...

Մշակեց Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ



Չիս ասում, թէ լա՞ց իս էլի.
Բարով տեսա, իմ սիրական,
Վարդի նըման բաց իս էլի
Խարերով,
Խարերով.
Բարով տեսա իմ սիրական:

Արի իմ դարդըս իմացի,
Ըշխեմէդ համան իմ լացի.
Օրըս էսպէս անց է կացի
Դարերով
Դարերով.
Բարով տեսա իմ սիրական:

Երբ կու հագնիս ալ ու ատլաս,
Տեսնողին կու շինես մաս մաս.
Դոշիդ պիտի լալ ու ալմաս
Շարերով,
Շարերով.
Բարով տեսա իմ սիրական:

Ես ճեզ գովեմ խաղի մէջըն.
Շամամներըդ թաղի մէջըն.
Ման իս գալի բաղի մէջըն
Նարերով,
Նարերով.
Բարով տեսա իմ սիրական:

Սայաթ – Նովէն վո՞ւնց դընջանա
Աչկերըդ ոսկէ փընջան ա.
Դուշմանի լեզուն մընջանա
Զարերով,
Զարերով.
Բարով տեսա իմ սիրական:

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱ

# ՈՒՍՏԻ ԿՈՒԳԱՍ

Մշ. Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ



Արի, բըլբուլ, խօսի բառըն,
Օխնըվի քու եկած սարըն.
Քի վարդըն էրից, ինձ իմ եարըն, —
Դու մի լաց լի, ես իմ լալու:

Մա՛ն իմ գալի դիդարի հիդ.
Վունց ղարիբ բըլբուլ խարի հիդ,
Դու վարդի հիդ, ես եարի հիդ, —
Դու մի՛ լաց լի, ես իմ լալու:

Սալբուխ ճըմա՛ն կանաչ իմ,
Էդ, խօսի, ձայնդ ճանանչիմ,
Դու վա՛րդ կանչէ, ես եա՛ր կանչիմ, -
Դու մի՛ լաց լի, ես իմ լալու:

Ղարիբ բըլբուլ ձայնիդ մալում.
Ես ու դու էրիմնէ մէ հալում.
Սայաթ-Նովէն ասաց զալում, —
Դու մի՛ լաց լի, ես իմ լալու:

Խօսք՝ Ա. ԽՆԿՕԵԱՆԻ

# ՏՈՒՅ – ՏՈՒՅ

Եր. Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ



Տույ, տույ, տույ, տույ,
Մի բուռ կրակ եմ,
Մուր տան ճրագ եմ,
Տույ, տույ, տույ, տույ, տույ,
Իմ սիրտն է խօսում,
Ես երգ եմ ասում,
Տույ, տույ, տույ, տույ, տույ, տույ:

## ԱՂՋԻ ԱՆՆԱՍՏԻԱԾ

### («ԱՆՈՒՇ» ՕՓԵՐԱՅԷՆ)



Ամառ էրեցիր սիրտս քո սիրով,
Ոտս կապեցիր թել-թել մազերով,
Եւ չեմ դիմանա, կը փախցնեմ զոռով։

Այ սարի աղջիկ,
Այ սիրուն աղջիկ
Այ դու կարմրաթուշ
Թուխամազ Անուշ։

## ԵՍ ՔՈՒ ՂԻՄԷԹԸՆ ՉԻՄ ԳԻՏԻ

ՍԱՅԱԹ ՆՈՎԱ — Մշ. Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ



Աշխարհումս իմըն դո՛ւն իս,
Բեմուրադ իս. մուրվադ չունիս.
Գլռոշներիդ նաքաթ ունիս, —
Ղանդու շաքարի նման իս։

Մազերըդ նման ռեհանի,
Դուն ուրիշ խիալ մի՛ անի,
Ոտիս արա՛, հոգիս մի՛ հանի,
Մուրւաթով խարի նման իս։

Գազա պիտի՝ հարիֆդ սոէ, —
Ակսէֆդ հաղուդ ալմաս է,
Ռանգըդ Փըռանգի ատլաս է, —
Զար դալամքարի նըման իս։

Վո՞ւնց դիմանամ էշղի չարին,
Աչկիմէս կաթում է արին.
Սայա՛թ-Նովա, նազլու եարին
Գընած նոքարի նման իս։

Աշուղական

# ՔԵՕՐ ՕՂԼԻ

Խօսք՝ Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ



Թէեւ ղըռաթիցը զրկուած
Բայց թուր ունիս վրադ կախած, հայ, հայ, հայ
Համզան տարուկ թոկից փախած,
Բայց դու էլ նո՞ն Քէօրօղլի, նան:

Մարդուս բախտն էլ տես այսպէս
Պտտում է ջաղացի պէս, հայ, հայ, հայ,
Մէկ օր տեսնի վիշապ ես,
Միւս օր ջաղացպան Քէօրօղլի, նան:

Բայց դու էլի Քէօրօղլին ես,
Ժողովրդի սիրելին ես, հայ, հայ, հայ,
Թէկուզ ջաղացպան էլ լինես,
Քեզ պատիւ կուտան Քէօրօղլի:

# ԵԱՅԼԻ

(«Սաֆա» Օփերայէն)

Խօսք եւ Երաժշտ. ԱՆՏՈՆ ՄԱՅԻԼԵԱՆԻ



Խունջիկ մունջիկ կարմու ես,
Հէյ, աման այ եայլի,
Դու մեր սարի մարալ ես,
Ճանըմ աման այ եայլի:
Հէ՜յ,
Լեզուդ շիրին Նիրվանի,
Տես խոստումդ կատարի,
Հէյ, աման այ եայլի,
Ճանըմ աման այ եայլի:

Ջէն ձէնի տուր այ աղպէր,
Հէյ, աման այ եայլի,
Կըռնիդ ուժ տուր այ վարպետ,
Ճանըմ աման այ եայլի:
Հէ՜յ,
Որ Մէյ (*) սարէն մեզի տա,
Խաս, խալիչա ու կարպետ.
Հէյ, աման այ եայլի,
Ճանըմ աման այ եայլի:

(*) *Գիւղ Շամախի գաւառի մէջ:*

## ԱՍՈՒՄ ԵՆ ՈՒՌԻՆ

Խօսք՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Երաժշտ. Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ



Խեղճը դողալով
Անյոյս կռացաւ
Դարտից ջորացաւ
Ուռենի դարձաւ։

Ջրերի վրա
Գլուխը կախած
Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց։

Ու ամբողջ տարին,
Մի միտք է անում,
Թէ խարը խարին
Ոնց է մոռանում։

## ՎԱՅՐԻ ԾԱՂԻԿ

Խօսք՝ Լ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

Երաժ. Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ



Ցրտերում մեծացար,
Անխնամ մեն մենակ,
Մի լաւ օր չտեսար
Որբի պէս տարագիր։

Ուր անցաւ կեանքը քո,
Սըգաւոր, տխրագին,
Գեղեցիկ, հոտաւէտ,
Դու ծաղիկ լեռնային։

## ԻՄ ԿԵԱՆՔԸ ՔԱՐՈՏ ՃԱՄԲԱ

Խօսք՝ ԳԵՂԱՄ ՍԱՐԵԱՆԻ

Երաժշտ. Ա. ՍԱԹԵԱՆԻ

Իմ կեանքը քարոտ ճամբա,
Լաչակըս գըլխիս ամպ ա,
Իմ խաւար հոգուս համար,
Իմ եարը վառած լամպ ա։

Արեւը գալ ա մտնում,
Իմ եարը վար ա անում,
Մաշինի ձէնից անես
Իմ սիրտը խաղ ա անում։

## ԶՈՅԳ-ԶՈՅԳ ԿՌՈՒՆԿ

Խօսք՝ ժողովրդական

Ձայնագրում՝ ԿՈՄԻՏԱՍԻ

Զոյգ զոյգ կըռունկ երկան վիզ,
Պապո, մամո կարգէք զիս։

Համ զիլ, համ վարդ, համ նարգիզ,
Պապո, մամո կարգէք զիս։

Էդման մեռել թորկէն վիզ,
Պապո, մամո կարգէք զիս։

# ԱՂՋԻ ԲԱԽՏԱՒՈՐ

Խօսք՝ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱՆՈՒՇ» Օփերայէն

Երաժ. Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ



Մեռնիմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես.
Սարի պէս մէջքիդ,
Կանգնած եար ունես:

Համբարձում, եայլա,
Եայլա, ջան, եայլա,
Սար սարեր եայլա,
Եայլա ջան եայլա:

# ՍԵՒ ԿԱՔԱՒԻԿ

Խօսք՝ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Երաժ. Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ



Էլ չես կարդում, հանդ ու արտում,
Մեր սարերէն կերթաս տըրտում.
Վայ կաքաւիկ, սեւ կաքաւիկ,
Վայ իմ կորած, սիրուն հաւիկ:

# ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ

Խօսք՝ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱՆՈՒՇ» Օփերայէն

Երաժ. Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ



Որս եմ բուրէս ձեզ արած,
Ձեր ծոցերին, ձեզ արած,
Կուզեմ կորչեմ անգիւմամն,
Էս աշխարհից բեզարած։

Կորչեմ բեզար դադարգին,
Քար սարէսար դադարգին,
Մեռնեմ պրծնեմ էս օրից
Բալքի առնեմ դադար քուն։

Ա՜խ, կը մեռնեմ՝ համա նա,
Վայ թէ յանկարծ իմանա,
Ես ազատուեմ էս ցաւից,
Աչքը լալով նա մնա։

# ԱՄՊԻ ՏԱԿԻՑ

Խօսք՝ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ «ԱՆՈՒՇ» Օփերայէն

Երաժ. Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ



Այ պաղ ջրեր, զուլալ ջրեր,
Որ գալիս էք սարերից,
Գալիս անցնում հանդ ու չոլեր.
Նարս էլ խմեց էդ ջրից։

Նարաք խմե՞ց, նարաք հովցա՞ւ.
Վառուած սիրտն իմ նարի
Նարաք հովցա՞ւ, նարաք անցա՞ւ
Անքուն ցաւը ջիկնարի։

Աղջի քո նարն եկաւ, անցաւ,
Վառուած, տարուած քո սիրով.
Էրուած ջիկնարն՝ եկաւ անցաւ,
Չը հովացաւ պաղ ջրով։

# ՎԱՐԴԸ

Խօսք՝ Վ. ԳՕԹԷԻ    Թարգմ. ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ    Եղան. Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ



Փոքրիկ տղան մի վարդ տեսաւ,
Տեսաւ մի վարդ դաշտի միջին,
Վարդը տեսաւ, ուրախացաւ,
Մօտիկ վազեց սիրուն վարդին.
    Սիրուն վարդին, կարմիր վարդին,
    Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասաց «Քեզ կը պոկեմ
Ա՛յ կարմիր վարդ, դաշտի միջին».
Վարդը ասաց. «Տե՛ս, կը ծակեմ,
Որ չը մոռնաս փշոտ վարդին»,
    Փշոտ վարդին, կարմիր վարդին,
    Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին.
    Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
    Կարմիր վարդը դաշտի միջին:

# ՊԵՊՈՅԻ ԵՐԳԸ

Խօսք՝ Դ. ՄԱԼԵԱՆԻ

Երաժշտ. Ա. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ



Հալալ մարդու սիրտը ուրախ,
Ճակատը միշտ բաց է ըլլում,
Վայ էն մարդին, որ համ գըլլում,
Համ էլ անհուշտ լաց է ըլլում:

Դամբը ձեռքիս ջուրն եմ մտնում,
Ձեռքս ու ոտս թաց է ըլլում,
Հալալ արիւն քրտինք թափում,
Թիքս ու դեղիս լաց են ըլլում:

Լուսնեակը լուս գիշեր խաւար
Առաւօտը բաց է լինում,
Խըլբըլխալէն լոբի ծըկներ.
Բազարումը հաց են ըլլում:

# ԵՍ ԲԼԲՈՒԼ ԵՄ

Խօսք՝ Ա. ԽՆԿՕԵԱՆԻ

Երաժ. Ա. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ



Սիրտս կուլա, կը մըզկըտա,
Ցաւը թափեց թեւերս
Վարդս քաղած, բուփը դատարկ,
Էլ ո՞ւմ տանեմ երգերս:

Վայ, լէ, լէ, վայ, լէ, լէ, լէ, լէ,
Վայ լէ, լէ, լէ լէ, լէ, լէ, վայ, լէ, լէ,
Վարդս քաղած, բուփը դատարկ,
Էլ ո՞ւմ տանեմ երգերս:

# ԱՆՈՒՇ ԳԱՐՈՒՆ

Երաժշտ. Դ. ՂԱԶԱՐԵԱՆԻ



Քեզ եմ մնում անուշ գարուն,
Ծաղիկ եարիս հետդ գալուն.
Դու կարօտ ես վառ արևին
Ես իմ կեանքի արև եարին:

Դու վարդ ունես քեզ հմայող
Քո կեանքի հետ նա էլ մարող.
Ես եար ունեմ յաւէտ գարուն
Իմ հոգւոյն մէջ վառ մնայուն:

Գիշեր, գիշեր գարնան գիշեր
Ման եմ գալիս ամեն գիշեր
Ծամերիս աստղեր լոյս չեն տալիս
Որ ես հասնեմ սիրած եարիս:

[illegible]

# ԿԼՈՐ Է ՊԱՐ



# ԿՈՒԺՆ ԱՌԱ

Ձայնագրեց՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Կուժն առա, ելա սարը,
Չը գըտա փիդան խարը,
Փիդան խարը ինձ տըվէք,
Չը քաշեմ ահ ու զարը:

Բըլբուլը դարի վրա,
Խնձորը սարի վրա,
Սիրած սիրածի տային,
Ջոր գետնին՝ քարի վըրա:

Մեծ սարի հովին մեռնեմ,
Շէկ տղի բոյին մեռնեմ,
Մի տարի ա չեմ տեսել, —
Տեսնողի աչքին մեռնեմ:

## ԳՆԱ, ԳՆԱ

Գընա, գընա, ոտիդ եմ,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սարին, օ՛, եա՛ր ջան,
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան.
Կարմիր խնձոր գոտիդ եմ, հա՛.
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Սա՛րին, օ՛, եար ջան.

Դու ինձ էստեղ չես թողնի,
Ուր որ երթաս, մօտիդ եմ:

Ապարանը քարոտ ա,
Քարի տակըն արոտ ա.

Ուղիղ եօթը տարի ա,
Քոյրն աղբօրը կարօտ ա:

Եար եմ գըտել՝ եարի պէս.
Ընկուզենի ծառի պէս.

Ուր որ երթաս կայնել եմ,
էն մեր սիրուն սարի պէս:

# ԿԱՔԱՒ ԹՌԱՒ

Երաժշ. Գ. ՍՈՒՆԻԻ — Ձայնագրեց՝ Ռ. ԽԱՐՏԸՄԵԱՆ



Սիփան սարը զուռ չիման է,
Եարն եմ սիրեր աննըման է.
Մեռնեմ եարոջ չորոր քէլքին,
Զինար բոյին, արեւ տեսքին,
Արի, եար ջան, քարով արի։
Զընգըլընգալէն սարովն արի։

Դու բարակ ես, բարունակ ես,
Արեգական նմանակ ես.
Մէջ իմ սըրտին անանակ ես,
Հոգիս էրեւաւ, բոց կրակ ես։
Արի, եար ջան, քարով արի,
Նարոտ կապած սարովն արի։

# ՍԻՐԵՑԻ ԵԱՐՍ ՏԱՐԱՆ

Սիրեցի եարս տարան. . .
Եարս տուին ու տարան. . .
Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Պոկեցին սիրտս ու տարան:

Ցաւըս խորն է ճար չըկա. . .
Ճար կա, ա՜խ, ճարող չըկա...
Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սրտակից ընկեր չըկա:

Լաւ օրերըս գընացին,
Ափսո՛ս, ախին, թռան գացին,
Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սեւ դարդերս մնացին:

## ՍԱՐԻ ԱՂՋԻԿ, ԱՐԻ

Սարի աղջիկ մեր նոր հանդում
Ա՛յ դո՛ւ, աղջի՛կ, հուր հրավառ
Համայնական հանգ ու արտում
Աշխատում ես դու միշտ զվարթ:
Արի աղջիկ, սարի աղջիկ,
Սովետական դարի աղջիկ:

Արտի միջին քաղ ես անում
Քո յաղթական կուռ ձեռքերով,
Հասկերի հետ խաղ ես անում
Քո կենսուրախ կուռ երգերով:
Արի աղջիկ, սարի աղջիկ,
Սովետական դարի աղջիկ:

Աշխատանքով տարւել ես դու
Արեւաշող մեր նոր արտում,
Արեւի պէս վառւել ես դու
Իմ կենսավառ ջահել սրտում:
Արի աղջիկ, սարի աղջիկ,
Սովետական դարի աղջիկ:

## ԵՐԵՒԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՌԵԼ

Երեւան բաղ եմ առել,
Նեյնիմ աման, նեյնիմ աման, նեյնիմ աման...
Ջիգյարըս դաղ եմ արել
Ա՜խ մէրըդ մեռնի,
Սարի աղջիկ, սարի ջեյրան,
Սարի մարալ, թառլան աղջիկ:

Կամաւ իմ քարա միջին,
Նեյնիմ աման, նեյնիմ աման, նեյնիմ աման...
Կը կանչեմ ձորա միջին,
Ա՜խ մէրդ մեռնի, եւայլն:

Գընա՛, գընա՛ գալիս եմ,
Նեյնիմ աման, նեյնիմ աման, նեյնիմ աման...
Ետեւիցըդ լալիս եմ:
Ա՜խ մէրդ մեռնի, եւայլն:

## ԽՆԿԻ ԾԱՌ

Խօսք ժողովրդական ԿՈՄԻՏԱՍԻ
Երաժշտ. մշ. Գ. ՍԻՒՆԻԻ

Մեր դըռանը խընկի ծառ
Գիւլո՛ւմ ջան.
Ձեր դըռանը խընկի ծառ,
Գիւլո՛ւմ ջան.
Խընկենին ա բերել բար,
Գիւլո՛ւմ ջան.
Իմ խորոտիկ, պըզտիկ եար,
Գիւլո՛ւմ ջան:

Մեր դըռանը խընկի ծառ,
Նաշխուն բըլբուլ վըրէն թառ.
Երթար ու գար, չորոր տար,
Սիրուն եարին օրօր տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրէն թառ
Գընար ու գար, շըւին տար,
Անուշ եարին թեւին տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրէն թառ.
Կարմիր խընձոր անել տար,
Ալվան ծաղիկ տանել տար:

## ՀՈՎ ԱՐԷՔ

Խօսք ժողովրդական — Երաժշտ. ԿՈՄԻՏԱՍԻ

Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք: —
Սարերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում:

Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ զով արէք,
Վարար անձրեւ թափէք, ծով արէք,
Դէշ մարդու օր-արեւը
Սեւ հողի տակով արէք:

Հո՛վ արէք, ամպե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք: —
Ամպերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում:

Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր, ջրե՛ր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ,
Մի վեր կացէք, իմացէ՛ք,
Տեսէք իմ սրտի ցաւեր:

## ՄԱՐՈՅԻ ԵՐԳԸ

Գիւլի ջա՛ն, փայտոն չանխտ կանեմ,
Եա՛ր, եարս ջա՛ն, քեզ մեր տունը տանեմ,
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:
Ալ բլուզիդ մեռնեմ,
Շալ բլուզիդ մեռնեմ,
Մարոյի կարած բլուզին մեռնեմ:

Գիւլի ջա՛ն, դու Մասիսի ծէրն ես,
Եա՛ր, եարս ջա՛ն, դու իմ սրտի տէրն ես,
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:
Ալ բլուզիդ մեռնեմ, եւայլն:

Գիւլի ջա՛ն, շատ, շատ ցանեք բամպակ,
Կերթամ Թիֆլիս վրէդ կանեմ զանգատ,
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:
Ալ բլուզիդ մեռնեմ, եւայլն:

Գիւլի ջա՛ն, կարմիր բոբինջանը,
Գտնանք արտը դինչանա մեր ջանը,
Եանա, եանա, էս էլ բախտի բան ա:
Ալ բլուզիդ մեռնեմ, եւայլն:

## ԼՃԻ ՄԷՋ ՆԱՒԱԿԸ

Խօսք՝ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆԻ

Լճին մէջ նաւակը
Մեղմ հովիկ կը տանի.
Նորա մէջ նստած է
Սիրահար պատանին:

Պատանին ձեռքն ունի,
Կիթառը ու կերգէ.
Իսկ քամին կը փախցնու,
Նաւակը եզերքէ:

Տար վերջին խօսքերըս,
Անձկալոյս ո՛վ լուսին.
Թէ քաղցրիկ անունը,
Յիշելով կը մեռնիմ:

Իրարմէ բաժնեցին
Մեզ աշխարհ եւ այս կեանք,
Գէթ մահով այսուհետ,
Ջրի տակ միանանք:

## ԻՄ ՉԻՆԱՐԻ ԵԱՐԸ

Խօսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ

Արեւ թըռվըռով ելաւ,
Ի՛մ չինարի եարը,
Մեր բանը կըռւով ելաւ,
Դարդիմա՛ն եարը.
Թըշնամու որդին մեռնի,
Ի՛մ չինարի եարը,
Իրա չար սըրտով ելաւ:
Դարդիմա՛ն եարը,
Ի՛մ չինարի եարը,
Ի՛մ չինարի եարը.
Ի՛մ չինարի եարը,
Գովակա՛ն եարը:

Ծըրագը վառա, վառա,
Հօր հետ վաստամարդ դառա,
Մէր ու աղբէր թող տըւի,
Ես իմ սիրածին առա:

Քարափի ծէրին կանչի՛,
Թո՛ղ թշնամին ամանչի.
Արեւի՛դ մեռնեմ, եա՛ր ջան,
Չինարի պէս կանանչի՛:

## ՊԱՂ ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ

ՋԻՒԱՆԻ

Պաղ աղբիւրի մօտը կանգնած մի աղջիկ,
Ձեռին սափոր լցրած ջուրն էր անուշիկ.
Աչքը ու ունքը դալմով քաշած, գեղեցիկ.
Մայրիկ, զարնւեցա սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Պաղ աղբիւրի մօտը, պարտիզում նստած,
Ունէին լաւ գինի, գառի խորոված,
Երգում էին, պարում էին բոլորած.
Մայրիկ, զարնւեցա սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Ցերեկը անդադար նորան եմ յիշում,
Գիշերն էլ երազիս մէջն եմ տեսնում.
Տոչորւած մանն կուգամ խեղճ, մոլոր, տրտում.
Մայրիկ, զարնւեցա սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Ա՜խ, երանի այն աւուր, շա՜տ երանի,
Տեսութեանը կրկին լինեմ արժանի,
Առանց նրան ես չեմ մնար կենդանի.
Մայրիկ, զարնւեցա սիրում եմ նորան,
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

## ՍԱՐԵՐԻ ՎՐՈՎ ԳՆԱՑ

Խօսք ժողովրդական — Երաժշտ. ԿՈՄԻՏԱՍԻ

Սարերի վըրով գընաց,
Եա՛ր, եա՛ր.
Արտօտով, արտօտով,
Եարիս կարօտով:

Ոչ լոր ելաւ ոչ կաքաւ,
Եա՛ր, եա՛ր,
Արտօտով, արտօտով,
Եարիս կարօտով:

Ծաղիկ էր հոտով-մոտով,
Եկաւ, անցաւ իմ մօտով,
Աչքըս տեսաւ՝ սիրեցի
Ու մընացի կարօտով:

## ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ
(«ԱՆՈՒՇ ՕՓԵՐԱՅԻՑ»)

Խօսք՝ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ — Երաժշտ. Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Սիրուն աղջիկ, ինչ ես լալիս,
Էդպէս մենակ ու մոլոր,
Ինչ ես լալիս ու մաշ գալիս,
Էս ձորերում ամեն օր:

Թէ լալիս ես վարդ ես ուզում,
Մայիս կգա, քիչ էլ կաց,
Թէ լալիս ես, եարդ ես ուզում,
Ա՜խ նա գնաց, նա գնա՜ց:

Արտասուելով, լալով էդպէս,
Նա չես դարձնի քո եարիդ,
Ինչու ի զուր հանգցնում ես,
Ջահել կրակն աչքերիդ:

Նրա անբախտ հողի վրա,
Պաղ ջուր ածա աղբիւրից,
Դու էլ գնա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի:

## ԵԱՐ ՈՒՆԷԻ ՉԻՆԱՐ ԲՈՅՈՎ

Եար ունէի չինար բոյով տեսքով աննըման,
Սիրունների թագուհին էր սիրով անսահման.
Ծով աչերով խորունկ խոշոր, սեւ սաթի նըման,
Երգ էր երգում անուշ ձայնով, բլբուլի նըման:
Ա՜խ իմ անուշ եար ինչո՞ւ հեռացար,
Ինչո՞ւ թողիր ինձ, ինչո՞ւ մոռացար.

Անուշ եարս չեմ մոռանում քո պատկերը ես
Գիշեր ցերեկ երազներում տեսնում եմ միշտ քեզ
Ինձ թողուցիր, անջատուեցի, մենակ մշտատեւ,
Անո՛ւշ եարիս, սիրո՛ւն նանի կարօտ եմ ես քեզ:
Ա՜խ իմ անուշ եար, եարդ քեզ դուրբան,
Թեւեր առ եկո՛ւր, թռչունի նման:

Ոնց դիմանամ ես այս ցաւին ընդմիշտ կարօտ քեզ
Ինծի համար արժէք չունի կեանքը առանց քեզ,
Երբ մենակ եմ այս աշխարհում, հոգիս անընկեր
Լաց ըլլալէն պիտի կոյրնան իմ խեղճ այս աչեր:
Ա՜խ իմ անուշ եար, եւայլն:

## ՇՈՂԵՐ ՋԱՆ

Խօսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ

Ամպել ա, ձուն չի գալի,
Շողե՜ր ջան,
Սարիցը տուն չի գալի.
Շողե՜ր ջան,
Դո՛ւ չորորա, դուն օրօրա՛,
Շողե՜ր ջան,
Ամպի տակին ձուն կերեւա.
Շողե՜ր ջան,

Սիրտըս կըրակով լըցուած,
Աչքերիս քուն չի գալի:

Հուրք ա թափում վերիցը,
Ես վա՛ռա քո սէրիցը:

Վարդավառին ինձ համար
Ձուն բեր դու սարերիցը:

# ՀՈՎ ԼԻՆԻ

Խոսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Յարիս տունը ծո՛վ լինի,
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Յարըս քամարով լինի:

Դե՛, թըռչե՛ք, թըռչե՛ք, հողը հանենք,
Մեր թշնամու դողը հանենք:

Ծաղիկ ես ծաղկանց միջին,
Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Մի հատ ես աղջկանց միջին,
Յարիս տունը ծո՛վ լինի,
Յա՛ր, ինձ պարզերես արա,
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Իմ ընկեր տըղոց միջին:
Յարըս քամարով լինի:
Դե՛, թըռչե՛ք, թըռչե՛ք, հողը հանենք,
Մեր թըշնամու դողը հանենք:

Արի, մի փաթփաթ խաղանք,
Տնկոզ մընանք, չը կաղանք.
Հարսանիքիդ ալեուրը
Մուղնու ուխտից վաղ աղանք:

Իրար հետ բաղը գընանք,
Ուտենք, խըմենք, լիանանք.
Թըշնամու աչքը հանենք,
Մեր լաւ օրից գոհանանք:

# ԽՈՒՄԱՐ ՊԱՌԿԷ

Խոսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ

Խումար պառկէ երես բաց,
Հո՛պ, հո՛պ, հոպպըտա, դըմպա՛,
Դեղին կարպետ, բըմբուլ բարձ:
Հո՛պ, հո՛պ, հոպպըտա, դըմպա՛,
Հե՛յ, հե՛յ, լա՛ւն է, հե՛յ, հե՛յ, լա՛ւն է,
Հե՛յ, հե՛յ, լա՛ւն է, հե՛յ, հե՛յ, լա՛ւն է:

Անուշ քընէ երես բաց,
Սահակն եկաւ խելքը գընաց:

Հաջոնց բակն էր դալդըրմա,
Աշնան թոզլին դավուլըմա:

Խաբար տարէք ըռեսին.
Աղջիկ բերի վեր մըռսին:

Հավարն ընկաւ ըռեսին,
Գետաղեք թափան վեր մըռսին:

Հերան ուտէր, գիրանար,
Մըկան խըմէր, ուրխանար:

# ԻՆՉՈՒ ԲԻՆԳԵՈԼԸ ՄՏԱՐ

Խոսք՝ ժողովրդական — Եր. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ, Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ

Ինչո՞ւ Բինգեոլը մըտար,
Դըլէ Մըկոն դէ՛,
Բաղի բըլբուլը գըտար,
Ափոն թըլը կոնդէ՛:

Թըլըկոն, թըլըկոն, թըլըկոն դէ՛,
Ափոն կոնդէ, թըլըկոն դէ՛,
Ափոն կոնդէ, թըլըկոն դէ՛,
Դըլէ Մըկոն դէ՛,
Ափոն թըլը կոնդէ՛:

Սուսամ սըմբուլ,
Բաղի բըլբուլ.
Ինչո՞ւ Բինգեոլը մըտար,
Դըլէ Մըկոն դէ՛,
Ափոն թըլը կոնդէ՛:

## ԿՈՂԲԱ ԽԱՑԼԻ

Խօսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. Ա. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ

Կողբա էլած սէլերը,
Կըտրաւ հոգուս թելերը.
Կամաց քըշէք սէլերը,
Կապեմ չուլքուս թելերը:

Ալ էղնիմ, ալ էղնիմ,
Դոշիտ վըրա խալ էղնիմ.
Թուշըդ պագնեմ զօր, գիշեր,
Ես քո սիրած եարոն եմ:

Աղջի գընանք մեր բախչէն,
Բանանք մեր սըրտի բողչէն,
Պագըմ դու տուր, պագըմ ես,
Թող դուշմաններն ամաչեն:

Ալ էղնիմ, ալ էղնիմ,
Դոշիդ վըրա խալ էղնիմ.
Թուշըդ պագնեմ զօր, գիշեր,
Ես քո սիրած եարոն եմ:

## ՄԵՐ ԲԱՄՊԱԿԻ ԱՐՏԵՐԸ

Խօսք՝ Ա. ՇԱՅՐՈՆԻ — Երաժշտ. Մ. ՄԱԶՄԱՆԵԱՆԻ

Մեր բամպակի, մեր բամպակի արտերը
Թեւ են առել, բաց են եղել վարդերը...
Տօնական են մեր դաշտերը բամպակի,
Վերջին հարուած կհասցնենք կուլակին:

Մեր սրտերի, մեր արտերի լայնութեամբ
Կեանք է առնում աշխարհը մեր հայակապ.
Հե՛յ ջան, հե՛յ ջան, այս օրերի խնդութեամբ
Մենք կերտում ենք ողջ աշխարհի ապագան:

Թող գա յոյսով, թող գա լոյսով բամպակը
Մեր աշխարհի արեւավառ երգերով,
Մենք թշնամու սրտին կը տանք գնդակը
Բանւորական մեր ամրակուռ ձեռքերով:

## ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԻՄ

Խօսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԻԻ

Սարերի հովին մեռնիմ,
Իմ եարի բոյին մեռնիմ.
Ես որ օխտն օր չեմ տեսել
Տեսնողի աչքին մեռնիմ:

Ախ էնիմ արուն կուգա,
Սեւ սրտիս զարուն կուգա,
Ինչ էնիմ ես էն եարը,
Գըտաւի գարուն կուգա:
Եար, եար, եար, եար, նա, նանի,
Ախ նանի, ջան նանի,
Վա՜յ նանի, նանի ջան:

Լուսնեակ դու բարձրանց գընա,
Լոյս տուր ու բարձրանց գընա,
Հեռու տեղ մի եար ունիմ
Բարեւ տուր, անցի գընա:
Ախ էնիմ արուն եւայլն:

Էս գիշեր, լուսնակ գիշեր,
Սեւ ունքեր, կարմիր թըշեր,
Իմ սիրած եարն ինձ տուէք,
Ձեզ խէր ու բարի գիշեր,
Ախ էնիմ արուն եւայլն:

# ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞ւր է կորել զարեւ,
— Գացինք, տեսանք, տիկ է մտել զարեւ:
Տիկ զարեւում,
Արե՛ւ, փայլում,
Հալալ է, կրմո՛, հալալ է,
Հալալ է, ջաւո՛, հալալ է:
Էս ի՞նչ քափուր դարու հասանք, հալալ է:
Էս ի՞նչ խաբար, կրմո՛, ստացանք, հալալ է:
Դէ՛հ, գնա՛, կիգամ, դէ՛հ, գնա՛, կիգամ
շուտ կիգամ,
Կարմիր սոլերս հագնիմ կիգամ, շուտ կիգամ:
Խորոտիկ, մորոտիկ,
Խորոտիկ, մորոտիկ իմ եարն է:
Նազ մի՛ անիր, նազ մի՛ անիր, հայ աղջիկ.
Փէշդ քաշէ, թոզ մի հանիր, նա՛ն աղջիկ:

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել զտիկ,
— Գացինք, տեսանք էծն է կերել զտիկ:
Էծն զտիկում,
Տիկ զարեւում,
Արե՛ւ, փայլում,
Հալալ է, կրմո՛, հալալ է, եւայլն:

Գացէ՛ք, Տեսէ՛ք, ո՞վ է կերել զէծ,
— Գացինք, տեսանք, գէլն է կերել զէծ:
Գէլն է զէծում,
Էծն զտիկում,
Տիկ զարեւում,
Արե՛ւ, փայլում,
Հալալ է, կրմո՛, հալալ է, եւայլն:

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել զգէլ.
— Գացինք, տեսանք, արջն է կերել զգէլ:
Արջն զգէլում,
Գէլն է զէծում,
Էծն զտիկում,
Տիկ զարեւում,
Արե՛ւ, փայլում,
Հալալ է, կրմո՛, հալալ է, եւայլն:

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է գելել զարջ,
— Գացինք, տեսանք վագրն է կերել զարջ:
Վագրն է զարջում,
Արջն զգէլում,
Գէլն է զէծում,
Էծն զտիկում,
Տիկ զարեւում,
Արե՛ւ, փայլում,
Հալալ է, կրմո՛, հալալ է, եւայլն:

## ԵՍ ՁԻՆԻՈՐ ԵՄ

Թարգմ. Գ. ՄԱՀԱՐԻԻ

Երաժշտ. մշ. Ռ. ՄԵԼԻՔԵԱՆԻ

Ես զինւոր եմ կարմիր երկրի,
Ճակատըս բաց ու հըպարտ.
Հե՜յ, հե՜յ...
Թուրըս կարմիր, կորուկ ու յաղթ,
Սուր սըւինըս միշտ անպարտ.
Հե՜յ, հե՜յ...
Ճակտիս աստղը յաւերժ փայլուն,
Ճամբէս լոյս է, լոյս ուրախ.
Հե՜յ, հե՜յ...

Իմ թիկունքում շարքեր կանգուն,
Միշտ անընկում, միշտ անվախ.
Հե՜յ, հե՜յ...
Մեր դրօշը ծածանւում է
Կապոյտներում լայնարձակ.
Հե՜յ, հե՜յ...
Եւ դիմում ենք առա՜ջ, առա՜ջ —
Դէպի կարմիր յաղթանակ:
Հե՜յ, հե՜յ...

## ՍՈՒԼԵՅՄԱՆԻ ԽՈՐՀՐԴՈՎ

Սուլեյմանի խորհրդով,
Արշին մալչի ես դարձա.
Թէեւ շատ տանջըւեցա
Բայց վերջապէս քեզ գտա:

Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի,
Անկեղծ սիրեցի ես քեզ,
Որ չեմ ապրիր առանց քեզ:

Ոչ ոքի չէի տեսել
Դարդերս չէի պատմել,
Սէրն ի՞նչ է չգիտէի,
Քեզի տեսա սիրեցի...

Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի նոյնն:

Ես ինձ թշւառ կարծէի
Բայց կեանքը մեզ ողջունեց.
Ա՜խ, մեր բախտն ալ մեզ օգնեց
Քու սիրովդ ապրեցի:

Այնպէս սիրեցի, սրտով սիրեցի նոյնն:

## ԷՍ ԳԻՇԵՐ ԼՈՅՍԸ ՏԵՍԱ

Էս գիշեր լուսը տեսա,
Երի, երի, երի ջա՜ն.
Իմ եարը դուսը տեսա,
Երի, մարալս՛ ջեյրան.
Ելել էր ուխտ էր գալի,
Երի, երի, երի ջա՜ն.
Հրացանը ուսը տեսա,
Երի, մարալս՛ ջեյրան:

Արեւը սարի վըրա,
Մամուռը քարի վըրա.
Ես ոսկէ սարք պիտէի,
Իմ սիրած եարի վըրա:

Էն, սարէն մարդ ա գալի,
Սարը կըրակ ա տալի.
Առաջըս ալլուխ բացաւ,
Իմացա վարդ ա տալի:

## ՕՐՕՐ, ԱԴԻՆՈ

Խոսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ

Սարը սարի նըման չէ,
Հո՛յ, օրօ՛ր, Ադինո,
Լա՛ւն ասէք, լաւն ասէք՝ իմ եարի.
Իմ սիրելու վատը մ'ասէք իմ եարի։

Քարը քարի նըման չէ,
Հո՛յ, օրօր…
Հարսն ու աղջիկ շատ տեսա,
Հո՛յ, օրօր…
Մէկն էլ եարի նըման չէ։
Հո՛յ, օրօր…

Ձառ-մանուշակ բաղի մէջ,
Թագնւել է բաղի մէջ.
Լուսաբացին ծաղկում է,
Հովի, շողի, շաղի մէջ։

Երանի քեզ, այ աղջիկ,
Ոսկիդ ծալէ-ծալ, աղջիկ.
Դու մեր տանը հարսնացու,
Ես քեզ համար տալ, աղջիկ։

## ՆԱ ՄԻ ՆԱԶ ՈՒՆԻ

Եկան գարնան անուշ օրեր,
Ծաղկով լցւան դաշտեր, ձորեր,
Եարս զուգւել սեյրան կերթա՝
Հագած-կապած ալվան շորեր։

Նա մի նազ ունի, նազ ունի, նազ ունի,
Ձեռքին սազ ունի, սազ ունի, սազ ունի,
Քայլելով սեյրան կերթա
Դարձել է ջեյրան, կերթա։

Հաւքեր կուգան երամ երամ,
Անուն ունեմ աշուղ շեյրամ
Էնքան եարիս պիտի կանչեմ
Հե՛յ ղուրպան իմ, որ քեզ բերեմ։
Նա մի նազ ունի, եւայլն։

## ՍՈՆԱ ԵԱՐ

Խոսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ

Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր.
Սո՛նա սիրուն, Սոնա՛ եար։

*Տղա.*
Վարդավառը գալիս ա,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր.
Ծաղիկը ցընծալիս ա.
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր։
Ա՛յ գիւղում կանչող աղջիկ,
Սոնա եար…
Ձէնըդ ծըլւըլալիս ա։
Սոնա սիրուն…

*Աղջիկ.*
Կանաչ տեղը՝ քաղում եմ,
Քարի միջին խաղում եմ.
Կաքաւի պէս սուրալով,
Տըղաներին տաղում եմ։

*Տղա.*
Կարմիր գինին թասումը,
Ես եմ քո հավասումը.
Ե՞րբ կը տաքնան աղջըկերք —
Վարդավառի պասումը։

*Աղջիկ.*
— Հա՛յ, սաի՛ նա, սաի՛ նա,
Կարմիր գինին թասին ա.
Տըղէ՞ք երբ կը կոտրւեն —
Հորթարողի պասին ա։

*Տղա.*
Սիրո՛ւն աղջիկ, նազ ունես,
Շահ զադայի սազ ունես.
Հողեմ Շահ-զադի գըլուխ,
Դու իմ հոգում հազ ունես։

## ԱԼ ԱՅԼՈՒՂ

Խօսք՝ ժողովրդական — Մշակում՝ ԿՈՄԻՏԱՍԻ

*Աղջիկ.*
Ալ այլուղըս կորաւ ձէր դուռ,
Փորփորել է սիրտըս մըրմուռ.
Բախտը ինծի գըցեր էր կուռ.
Ջա՛նո, ջա՛ն.
Սիրուն տըղա, տո՛ւր այլուղըս:

*Տղա.*
Ալ այլուղըդ ես չը գըտա,
Երդւում եմ աստւած վըկա.
Ով գըտել է թո՛ղ բերի տա.
Ջա՛նո, ջա՛ն.
Սիրուն աղջիկ, քո այլուղըդ:

*Աղջիկ.*
Ալ այլուղըս եարս էր քաշխել,
Ալ արըրշում շուրջը նախշել,
Պատկերըս վըրէն էր քաշել.
Ջա՛նո, ջա՛ն.
Սիրուն տըղա, տո՛ւր այլուղըս:

*Տղա.*
Ջահել, ջիվան սարերն ընկա,
Ցաւոտ սըրտիս ճար չը գըտա.
Քու սէրն ինծի հոգի կուտա,
Ջա՛նո, ջա՛ն.
Թո՛ղ ինձ մընա ալ այլուղըդ:

*Աղջիկ.*
Ա՜յս ի՞նչ սեւ իմ խորթ մօրըս,
Կամ ինչ պատմեմ ազիզ հօրըս.
Խաբար կուտան շէկ աղբօրըս,
Ջա՛նո, ջա՛ն.
Տըղա՛, տըղա՛, տո՛ւր այլուղըս:

*Տղա.*
Սեւուկ աղջիկ, սիպտակ հագիր,
Առ այլուղըդ վէրքըս կապիր.
Սիրուդ գերի ինձ մի՛ տանջիր.
Ջա՛նո, ջա՛ն.
Էրւած աղջիկ, ա՛ռ այլուղըդ:

## Ք Ա Ղ Հ Ա Ն

Խօսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ

Կարմրան գութան հանեցի,
Նար, նայ, նայ, նա՜յ, նայ, նա՜յ,
Արտը բամպակ ցանեցի
Նանա հար, նա՜յ, նայ, նա՜յ:
Ամառն եկաւ, քաղն ելաւ,
Նար, նայ, նայ, նա՜յ, նայ, նա՜յ,
Քաղհանւոր ճարեցի,
Նանա հար, նա՜յ, նայ, նա՜յ:

Քաղհան կանեմ եռ՝ քարով,
Տոլմա կեփեմ թիթարով.
Աշնան անի լաւ օրեր,
Բամպակ քաղեմ նուբարով:

Թեոնամ սայլը սար հանեմ,
Սար հանեմ ու տուն տանեմ.
Դուրս գա չարի չար աչքը,
Զըմեռ հանգիստ օր կանեմ:

## Ա Լ Ա Գ Ե Ո Զ   Ա Չ Ե Ր Դ

Խօսք՝ ժողովրդական — Երաժշտ. մշ. ԿՈՄԻՏԱՍԻ

Ալագեոզ աչերէդ, կամար ունքերէդ
Ուզում եմ հեռանալ, չի թողնում սէրդ:

Արի ջա՛ն արի, արի ջա՛ն արի,
Սիրտըս կը վառի:

Ես քեզ սիրեցի որ ինծի եար լինես,
Էրուած վառուած սըրտիս դեղ ու ճար անես:

Արի ջա՛ն արի, արի ջա՛ն արի,
Սիրտըս կը վառի:

## ԵԿԷՔ ՔՈՅՐԵՐ

(«Անուշ» Օպերայից)

Խօսք՝ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Երաժշտ. Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Եկէք քոյրեր, սէգ սարերի
Զմնաղագեղ ոգիներ,
Եկէք ջահել սիրահարի
Սէրը ողբանք վաղամեռ:

Օխտն աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք դրել,
Խնդիրք արել աստղերին,
Փափագ սրտով խնդիրք արել,
Բարի ժպտուն իր սէրին:

Ափսո՜ս, Անուշ, սարի ծաղիկ,
Ափսոս իգիթ քո հարին,
Ափսոս քոյին թելիկ-մելիկ,
Ափսոս էդ ծով աչքերիդ...

## ԱԽ ՄԱՐԱԼ ՋԱՆ

Խօսք՝ Ժողովրդական

Մշակում՝ ԿՈՄԻՏԱՍԻ

Ա՜խ, մարա՛լ ջան,
Կոկոնքս թառամած մնաց,
Ջա՜ն, գեարա՛լ ջան.
Սիրտըս կըրակած մնաց.
Ա՜խ, մարա՛լ ջան,
Ի՞նչ անեմ իմ ապրելը,
Ջա՜ն, գեարա՛լ ջան.
Իմ աչքերը բաց մնաց:

Կամար ունքըդ գովեցիր,
Սիրել էիր՝ առեցիր.
Ինձ պէս ուժով կըտրճին
Դու անզանակ մորթեցիր:

Ջահիլ եմ, ընկեր չունիմ,
Ընկել եմ ես, տէր չունիմ,
Ոչ լաւ անէք, ոչ էլ վատ, —
Համբերութեան սէր չունիմ:

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԽԱՅԼԱ

(«Անուշ» Օպերայից)

Խօսք՝ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

Երաժշտ. Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Համբարձում եկաւ, ծաղկունքը ալվան,
Ջուգել են հանդեր նախշուն զարդերով.
Փունջ փունջ աղջիկներ սարերը ելան,
Վիճակ հանելու, աշխոյժ երգերով:

Համբարձում եայլա,
Եայլա ջան, եայլա,
Լաւ օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

Երգ ու բոյր խառնած
Թեւ թեւի տուած,
Ջուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում
Ինչպէս թիթեռներ:

Համբարձում եայլա,
Եայլա ջան, եայլա,
Լաւ օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

# ՑԱՆԿ ԵՐԳԵՐՈՒ


Ա.

Ալագեազ . . . 33
Ալագեազ աչերդ . . . 61
Ալ այլուղ . . . 61
Ա՜խ, մարալ ջան . . . 62
Աղջի անաստուած . . . 42
Աղջի բախտաւոր . . . 45
Աղջիկ նազերով, նազերով . . . 27
Աման օրօրդ . . . 37
Ամպի տակից . . . 46
Անուշ գարուն . . . 49
Անտունի . . . 30
Ասում են ուռին . . . 44
Արի մանան . . . 28
Արտերը ծլել են . . . 20
Արօրն ու տատրակ . . . 34

Բ.

Բամպկի տակին . . . 28
Բանւորուհու երգը . . . 8
Բարի լուսի . . . 36
Բարձր սարեր . . . 46

Գ.

Գարուն . . . 16
Գարուն ա . . . 26
Գացէք տեսէք . . . 58
Գնա՛, գնա՛ . . . 50
Գոռ մրրիկներ . . . 5

Դ.

Դուն էն գլխէն . . . 39

Ե.

Եայլի . . . 43
Եար ունէի չինար բոյով . . . 55
Եկէք քոյրեր . . . 62
Ես բլբուլ եմ . . . 48
Ես գինւոր եմ . . . 59
Ես նուռ եմ . . . 9
Ես պուճուր . . . 36
Ես սարէն կուգայի . . . 19
Ես քեզ տեսա . . . 29
Ես քու դիմերքըն չեմ գիտի . . . 42
Երեւան բաղ եմ առել . . . 52
Երկինքն ամպել է . . . 20

Զ.

Զար զընգը . . . 15
Զոյգ – զոյգ կռունկ . . . 44

Է.

Էս գիշեր լուսը տեսա . . . 59
Էսօր ձորը նորել է . . . 12

Ի.

Իմ կեանքը քարոտ ճամբա . . . 44
Իմ չինարի եարը . . . 54
Ի՞նչ կոնիմ . . . 38
Ինչո՞ւ Բինգեօլը մտար . . . 56
Ինտերնացիոնալ . . . 4

Լ.

Լճի մէջ նաւակը . . . 53

Խ.

Խնկի ծառ . . . 52
Խումար պառկէ . . . 56

Ծ.

Ծաղկոց մտա . . . 31
Ծիրանի ծառ . . . 12

Կ.

Կար կըթելու երգը . . . 25
Կանչը . . . 9
Կաքքիքի երգը . . . 16
Կաքաւ թռաւ . . . 51
Կաքաւի երգը . . . 29
Կիւրճի աղջիկ . . . 19
Կլոր է պար . . . 49
Կոլխոզական պարերգ . . . 17
Կոլխոզական տրիոլետներ . . . 10
Կոլխոզ աղջիկ . . . 15
Կոլխոզի աղջիկ . . . 11
Կողբա եայլի . . . 57
Կոմսոմոլկան ու Կոմսոմոլիստը . . . 22
Կուժն առա . . . 50

Հ.

Հաքքրքան . . . 35
Համբարձում եայլա . . . 62
Հարսի երգը . . . 21
Հնձւորի երգը . . . 24
Հոկտեմբերի երթը . . . 24
Հոյ նազան իմ . . . 27
Հով արէք . . . 53
Հով լինի . . . 56

Ճ.

Ճախարակի երգը . . . 21

Մ·

Մարոյի երգը . . . . . . . . . . . 53
Մեր բամպակի արտերը . . . . . . . 57
Մեր կոլխոզի արտերը . . . . . . . 14
Մի խոսք ունեմ . . . . . . . . . . 37

Ն·

Նա մի նազ ունի . . . . . . . . . 60
Նոր գութան . . . . . . . . . . . 10
Նոր երգ . . . . . . . . . . . . 18
Նորեկ գեղջկուհի . . . . . . . . . 18

Շ·

Շեկ տղա . . . . . . . . . . . . 7
Շողեր ջան . . . . . . . . . . . . 55

Ո·

Ոսկի մատնիք . . . . . . . . . . 23
Ուստի կուգաս . . . . . . . . . . 41

Չ·

Չինար ես . . . . . . . . . . . . 30
Չես ասում թէ . . . . . . . . . . 40

Պ·

Պաղ աղբիւրի մօտ . . . . . . . . 54
Պարերգ . . . . . . . . . . . . . 13
Պեպօյի երգը . . . . . . . . . . . 48
Պստկ պստկ . . . . . . . . . . . 32

Ջ·

Ջան Ադրբեյջան . . . . . . . . . 23
Ջան բամպակ . . . . . . . . . . . 14

Ռ·

Ռանչպարի երգը . . . . . . . . . 7

Ս·

Սարերի հովին մեռնեմ . . . . . . 57
Սարերի վրով գնաց . . . . . . . 54
Սարի աղջիկ . . . . . . . . . . . 31
Սարի աղջիկ արի՛ . . . . . . . . 52
Սարօն ու Մարօն . . . . . . . . . 21
Սեւ կաքաւիկ . . . . . . . . . . 45
Սիրեցի եարս տարան . . . . . . . 51
Սիրուն աղջիկ . . . . . . . . . . 55
Սոնա եար . . . . . . . . . . . . 60
Սոնա ջան . . . . . . . . . . . . 6
Սուլեյմանի խորհուրդով . . . . . 50
Սուրը կտրուկ . . . . . . . . . . 6

Վ·

Վայրի ծաղիկ . . . . . . . . . . 44
Վարդը . . . . . . . . . . . . . 47

Տ·

The Star-Spangled Banner . . . . . . 3
Տըլէ եաման . . . . . . . . . . . 32
Տույ – տույ . . . . . . . . . . . 41
Տրակտորի երգը . . . . . . . . . 33

Ք·

Քաղհան . . . . . . . . . . . . . 61
Քաղ հանող գեղջկուհու երգը . . . 8
Քելեր ցոլեր . . . . . . . . . . . 25
Քելէ քելէ . . . . . . . . . . . . 26
Քէօր օղլի . . . . . . . . . . . . 43

Օ·

Օրօր . . . . . . . . . . . . . . 11
Օրօր, Ադինա . . . . . . . . . . 60

THE BOSTON MUSIC COMPANY

# SECULAR CHORUSES

## MIXED VOICES

| | | | |
|---|---|---|---|
| 1324. | Beal, F. P. | My America | .10 |
| 1325. | Franke-Harling, W. (arr.) | Comin' through the Rye | .15 |
| 1326. | Richards, A. E. | Mister Boogaman | .15 |
| 1327. | Moussorgsky, M. | Coronation Scene from "Boris Godounof" (*Orch. ad lib.*) | .25 |
| 1328. | Towner, E. | Honey (*a cappella*) | .15 |
| 1329. | Foster (Engel) | Old Folks at Home (*a cappella*) | .15 |
| 1331. | Treharne, B. | Dirge for a Fallen Soldier (*A. Solo, Voice parts only*) | .10 |
| 1333. | Chadwick, G. W. | Land of our Hearts | .12 |
| 1334. | Nevin, Gordon B. | To the Wind (*Vln. ad lib.*) | .15 |
| 1336. | Mana-Zucca | The Star of Gold | .15 |
| 1337. | Wilson, L. | The Same Old, Dear Old Place | .15 |
| 1340. | Williams, G. B. | The Maids of Sevilla (*Mandolin obbl.*) | .30 |
| 1341. | Densmore, J. H. | The Unfurling of the Flag (*Patriotic*) | .15 |
| 1342. | Martel, J. | Mayflower Song | .10 |
| 1344. | Saminsky, L. | Tartar Crimean Song (*a cappella, ad lib.*) | .15 |
| 1346. | Saminsky, L. | To Zion's Heights | .15 |
| 1348. | Protheroe, D. | The Shadow March | .15 |
| 1436. | Greene, Edwin | Sing Me to Sleep (*a cappella*) | .20 |
| 1438. | Nutting, Godfrey | Sing! Sing! Birds on the Wing (*a cappella*) | .20 |
| 1454. | Reddick, W. | Sweet Canaan | .15 |
| 1339. | Densmore, J. | Hail, Thou Great Song of Peace (*Patriotic*) | .20 |
| 1509. | Brown-Bertrand | Old-Fashioned Mother (*a cappella*) | .12 |
| 1652. | Toselli, Enrico | Rimpianto (Serenade) (*a cappella*) | .15 |
| 1611. | Diggle, R. | Bill's Billboard (*Humorous*) | .15 |
| 1692. | Robinson, A. | Water Boy (*S. Solo, Humming Cho., a cappella*) | .20 |
| 1700. | Janpolski, A. G. | Kabak (A Russian Episode) (*a cappella*) | .15 |
| 1701. | Janpolski, A. G. | Vanka (The Droshka Driver) | .15 |
| —1707. | Russian Folk-Song | Song of the Volga Boatmen (*a cappella*) | .10— |
| 1628. | Rubinstein, A. | Twilight is Lovelight | .15 |
| 1718. | Londonderry Air | Would God I Were the Tender Apple Blossom (*a cappella*) | .12 |
| 1723. | Spaeth, S. | Oh, Yes! ("Wait till I git on my robe") (*a cappella*) | .15 |
| 1724. | Rachmaninof, S. | The Island (*a cappella*) | .15 |
| 1750. | Ponce, M. A. | Estrellita (My Little Star) | .15 |
| 1754. | Mana-Zucca | De Heabenly Choir (*a cappella*) | .20 |
| 1767. | Simpson, N. | Friends of Yesterday (*a cappella*) | .20 |
| 1774. | Protheroe, D. | My Honey-Suckle Lou (*a cappella*) | .15 |
| 1788. | Arne, M. | The Lass with the Delicate Air (*Acc. ad lib.*) | .15 |
| 1789. | Trenarne, B. (Arr.) | A Medley of Negro Spirituals (*a cappella*) | .40 |
| 1790. | Mendelssohn, F. | On the Sea (*Acc. ad lib.*) | .15 |
| 1612. | Dvořák, A. | The Harvest Cornfield | .12 |
| 1794. | Queen Liliuokalani. | Aloha {*Acc. for Po. or Mand. and Guit.*} *Ad lib.* | .10 |
| 1799. | Danks, H. P. | Silver Threads Among the Gold (*a cappella*) | .12 |

THE BOSTON MUSIC CO., BOSTON, MASS.
G SCHIRMER, Inc., NEW YORK

# Song of the Volga Boatmen

Chorus of Mixed Voices

English words by
Nathan Haskell Dole

Russian Folk Son[g]
*Arranged by Harrison Ni[...]*




*Pronounced *Aiy-yooch-nem*, with a strong gutteral on end of second syllable.



*Copyright, 1927, by The Boston Music Co.*
Printed in U.S.A.


cresc.
mf
Spring has melt - ed ice and snow; Green the bend - ing wil - lows grow;
Let the haw - ser nev - er slack! Strain the shoul - ders, bend the back!
dim.
Ai da, da ai da! Ai da, da ai da! As the lad - en bark we tow, Haul a - way!
Ai da, da ai da! Ai da, da ai da! Till the night comes cold and black,
p
pp
ppp
Haul a - way! Sing-ing makes the la - bor pay. Haul a - way! Haul a - way!
Ai-yookh-nyem! Ai-yookh-nyem!

# THE BOSTON MUSIC COMPANY
# SECULAR CHORUSES

## MIXED VOICES

| | | | |
|---|---|---|---|
| 41. | Gounod, C. | **Chorus of Bacchantes** | .15 |
| 42. | Nevin, E. | **The Night has a Thousand Eyes** (*a cappella, Vln. obbl.*) | .10 |
| 44. | Nevin, E. | **Evening Song** (*a cappella. ad lib.*) | .15 |
| 45. | Nevin, E. | **My Love** (*a cappella*) | .10 |
| 46. | Nevin, E. | **A May-Day Dance** (*Unison, Po. 4-hands acc.*) | .15 |
| 48. | Bullard, F. F. | **June** (*a cappella*) | .15 |
| 49. | Bullard, F. F. | **In the Merry Month of May** (*a cappella*) | .15 |
| 51. | Surette, T. W. | **The Hill School** (Commencement Song, *Unison*) | .10 |
| 52. | Hadley, H. K. | **Sleighing Song** (*Orch. or Po. acc.*) | .20 |
| 54. | Hadley, H. K. | **May-Day** (*Orch. or Po. acc.*) | .20 |
| 55. | Hadley, H. K. | **A Red, Red Rose** | .15 |
| 56. | Johns, Clayton | **Come, Shepherd Swains** (*a cappella*) | .15 |
| 57. | Johns, Clayton | **Fa, la, la** (*a cappella*) | .15 |
| 59. | Cornelius, P. | **The Ancestral Tomb** (*B. Solo, a cappella*) | .15 |
| 61. | Little, E. | **Let Memories Come** (*a cappella*) | .15 |
| 63. | Prout, E. | **Hail to the Chief** (*Orch. or Po. acc.*) | .20 |
| 64. | Burdett, G. A. | **The Wayside Rose** (*a cappella*) | .15 |
| 65. | Gounod, C. | **Waltz and Chorus from "Faust"** (*with soloists*) (*Orch. ad lib.*) | .20 |
| 66. | Clough-Leighter, H. | **My Lady Chlo'** | .15 |
| 67. | Osgood, G. L. | **The Song of the South** (*Band or Orch. acc., ad lib.*) | .10 |
| 68. | Nevin, E. | **A Song** (from "Love's Labour Lost") (*a cappella*) | .15 |
| 71. | Bullard, F. F. | **The Elfhorns** (*a cappella, ad lib.*) | .15 |
| 73. | Burdett, G. A. | **A Spring Song** (*a cappella*) | .20 |
| 74. | Birch, J. E. | **As thro' the Land at Eve we went** (*a cappella*) | .15 |
| 75. | Meyerbeer, G. | **March of Progress** (Vocal March) (*Orch. ad lib.*) | .15 |
| 76. | Protheroe, D. | **Twilight** (*a cappella*) | .15 |
| 80. | Whelpley, B. | **Marching Song of Stark's Men** | .15 |
| 241. | Schubert, F. | **Cradle Song** | .20 |
| 242. | Schubert, F. | **Night and Dreams** | .15 |
| 243. | Schubert, F. | **Love's Message** | .20 |
| 244. | Schubert, F. | **Hark, Hark, the Lark** | .15 |
| 246. | Landsberg, S. | **Dry yo' Eyes** | .15 |
| 249. | Stewart, H. J. | **My Lady** (*Po. ad lib.*) | .20 |
| 251. | Stewart, H. J. | **Soft and Deep** (Lullaby) (*Acc. ad lib.*) | .15 |
| 254. | Birch, J. E. | **Close His Eyes** (*Memorial Day*) (*a cappella*) | .15 |
| 255. | Carroll, M. H. | **The Wind** (*a cappella*) | .15 |
| 257. | Dvořák, A. | **Lullaby** (*a cappella*) | .15 |
| 258. | Gaul, H. B. | **May I Print a Kiss?** (*a cappella*) | .15 |
| 259. | Gaul, H. B. | **There is Dew for the Flow'ret** | .20 |
| 261. | Stewart, H. J. | **Bedouin Love Song** (*a cappella*) | .15 |
| 262. | Gaul, H. B. | **The White Owl** | .15 |
| 267. | Nevin, E. | **The Rosary** (*S. or T. Solo, Po. ad lib.*) | .15 |
| 268. | Nevin, E. | **The Rosary** (*Po. ad lib., Orch. ad lib.*) | .15 |

THE BOSTON MUSIC CO., BOSTON, MASS.
G. SCHIRMER, Inc., NEW YORK

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0061419

ԳԻՆ
ՄԷԿ ՏՈԼԱՐ

ЦЕНА
1377